Azg

Azg armenian daily

29 ԱՊՐԻԼ 2000 ՇԱԲԱԹ 78 (2046)

Իսրայելը երկուշաբթի պատասխան կտա Թուրքիային

ՍՏԱՄԲՈՒԼ, 26 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական լրատվամիջոցները շաբաթվա կեսից ի վեր ակնարկեցին Իսրայելի կողմից հայկական ցեղասպանության հարցը դասագրքերում ընդգրկելու հայցարարությանը: «Թրքիա դեյլի նյուզ» օրաթերթի տեղեկացմամբ, Իսրայելի դիվանագիտական աղբյուրները թերթին տեղեկացրել են, որ նշված հայցարարությունը պետք է գնահատել որպես նախարարի անձնական տեսակետ: «Թուրքիայի եւ Իսրայելի հարաբերությունները շատ կայուն եւ ամուր են: Դրանք անհնար է խաթարել»: Թուրքական թերթը գրում է, որ Իսրայելի պատգամավորները երկուշաբթի օրը պատգամավորական պատասխան կտան արված հայցարարության համար: Պատասխանի փորձ-ինչ ուշացումը կապվում է Իսրայելում այս շաբաթ ընթացող հոգեւոր տոնակատարությունների հետ:

ՄՈՍԿՎԱ

Արամ Սարգսյանը հանդիպեց Միխայիլ Կասյանովին

Իտեռային պարտք ենք խա՞ն, թե՞ երեսուն հազար ԱՄՆ դոլար

Մոսկվան Երեւանից ընթրնում է ակնկալում

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

«Մոսկվան Հայաստանի հետ զարգացող բարեկամական հարաբերությունների շրջանակներում երեւանից ընթրնում է ակնկալում», ՀՀ վարչապետի Մոսկվա գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ընթացքում նշել է ՌԴ առաջին փոխվարչապետ Միխայիլ Կասյանովը: Նա հավաստել է Ռուսաստանի պատրաստակամությունն ընդառաջել հայկական կողմի խնդրանքներին եւ ուշադիր քննարկել Ռուսաստան-Հայաստան փոխհարաբերություններում կուտակված խնդիրներն ու հարցերը: Ապրիլի 27-28-ին միջկառավարական քննարկումների կիզակետում էներգետիկ խնդիրներն են եղել, մասնավորապես Իտեռային Հայաստանի պարտքը եւ հայկական ատոմակայանը: Վերջինիս վերաբերյալ Ռուսաստանի ատոմային էներգետիկայի նախարար Եվգենի Ադամովն ասել է, թե հայկական ԱԷԿ-ը լավ վիճակում է ու 2004-ին փակելու անհրաժեշտություն չկա: Պրն Ադամովը պարզաբանել է, թե որոշ ուժեր զուտ իրենց շահերով առաջնորդվելով ձգտում են փակված տեսնել հայկական ատոմակայանը, ինչպես նաեւ ԱՊՀ տարածքի մյուս ԱԷԿ-երը՝ վկայակոչելով Լիտվայում արտաքին ճնշման տակ փակված Իգնալինի ԱԷԿ-ը: ՌԴ ատոմային էներգետիկայի նախարարը նշել է, որ հայ-ռուսական ընթացիկ բանակցությունների կարեւոր կետ հանդիսացող հայկական ատոմակայանի շուրջ լուրջ բարդություններ չկան:

Տես էջ 2

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռոբերտ Քոչարյանը ստեղծո՞ւմ է իր կուսակցությունը

Իշխանության նոր կուսակցություն

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

Քաղաքական շրջանակներում գնալով ամրակայվում են այն լուրերը, թե հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը 98 թ. ընտրություններից առ այսօր բավական թերահավատ է վերաբերել քաղաքական կառույցներին եւ այդպես էլ չի նախաձեռնել ինքնուրույն կուսակցության ստեղծում, մոտ ժամանակներս կձեռնարկի իր քաղաքական հենարանը հանդիսացող ուժի հիմնադրում: ՀԺԿ քաղաքական քարտուղար Հմայակ Հովհաննիսյանը, որը նաեւ Քաղաքագետների միության նախագահն է, **«Ազգին»** հավաստեց, որ Ռոբերտ Քոչարյանի վերջին քայլերը վկայում են նրա այս մտադրության մասին: Երկամյա նախագահությունը Քոչարյանին եւ նրա մերձավոր շրջապատին բերել է մի եզրակացության, որ պարբերաբար տարբեր կուսակցությունների վրա հենվելը կամ նրանց աջակցությունը ձեռք բերելը թույլ չի տալիս կայուն քաղաքական ուղեգիծ իրականացնել: Հմայակ Հովհաննիսյանը համոզված է, որ այս երկու տարվա ընթացքում Հայաստանում գործել է խորհրդարանական հանրապետության մոդելը, եւ նախագահը պարտադրված էր դիտորդի կարգավիճակ ունենալ, քանզի կայուն քաղաքական հենարանից զրկված լինելով, նա մշտապես ստիպված է եղել ուղղորդվել մեծամասնության նպաստակներով: Երբ նախագահը չունի խորհրդարանական մեծամասնություն, ապա նա զրկվում է թեկուզ եւ իր իսկ նշանակած կառավարության եւ վարչապետի գործունեությունը վերահսկելու ու միանշանակ ղեկավարելու հնարավորությունից. «Խորհրդարանական մեծամասնություններն իրենց ներսից ծնում էին կառավարություններ», շեշտեց Հմայակ Հովհաննիսյանը: Վարչապետ-ԱԺ տանդեմը մշտապես հաջող գործել է՝ կամա թե ակամա չեզոքացնել նախագահի ազդեցությունը:



Տես էջ 2

Ռուսաստանի փոխվարչապետը սառը ջուր է լցրել Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի միանալու կողմնակիցների ոգեւորության վրա

ՄՈՍԿՎԱ, 28 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Մոսկվային եւ Մինսկին դեռ անհրաժեշտ է առավելագույնս ճիշտ կշռադատել միաբեւեռական պետության ստեղծման մեխանիզմները, որն առաջին հերթին պահանջում է, որպեսզի երկու կողմերը փոխզիջումների գնան: Ապրիլի 28-ին այսպես պատասխանեց Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Միխայիլ Կասյանովը Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի միանալու գաղափարի նկատմամբ Մոսկվայի վերաբերմունքը մեկնաբանելու հայ լրագրողների խնդրանքին: Փաստորեն, սառեցնելով «միացման» կողմնակիցների ոգեւորությունը՝ Կասյանովն, այնուամենայնիվ, նշել է, որ Ռուսաստան եւ Բելառուս միությունն հանդես կգա որպես բաց կառուցվածք, եւ շահագրգիռ կողմերը հնարավորություն կունենան ծանոթանալ բոլոր փաստաթղթերին, դրանց հիման վրա իրենց եզրակացություններն անել, որոշումներ ընդունել:

Այսպիսով, Ռուսաստանի կառավարության ղեկավարը դե-ֆակտո հավաստել է, որ այսօր պատշաճական Մոսկվան այնքան էլ շահագրգռված չէ դեռեւս գոյություն չունեցող Ռուսաստան եւ Բելառուս միությանը Հայաստանի միանալու գաղափարի արագացմանը: Ակնհայտ է, որ Մոսկվան հակված է դեպի հեռավորություն պահելու դիրքորոշումը՝ նույնիսկ Մինսկի նկատմամբ, ինչը անընդհատ Բելառուսի ղեկավար Ալեքսանդր Լուկաշենկոյի դժգոհությունն է առաջացնում: «Վիրտուալ միությանը միանալու վիրտուալ գաղափար», այսպես է գնահատում այսօր ռուս քաղաքական գործիչների մեծամասնությունը հայ «յունիոնիստների» նախաձեռնությունը: Վերջիններս, Մոսկվայի շատ փորձագետների կարծիքով, նույնպես «վիրտուալ» են:

Վահրամ Աղաջանյանի նկատմամբ վճիռը մտահոգում է լրագրողական շրջանակներին

Հայաստանի ժուռնալիստների միության եւ Երեւանի Մամուլի ակումբի հայտարարությունը

Ապրիլի 27-ին ԼՂՀ գերագույն դատարանի կոլեգիան, քննարկելով Ստեփանակերտի քաղաքային դատարանի կողմից մեկ տարվա ազատազրկման դատապարտված լրագրող Վահրամ Աղաջանյանի գործի մասին վճռաբեկ գանգատը, վճռեց կալանքը փոխարինել պայմանական պատժով՝ երկամյա փորձնական ժամկետով: Հայաստանի ժուռնալիստների միությունը եւ Երեւանի Մամուլի ակումբը այս որոշումը գնահատում են իբրեւ արհամարհանք խոսքի ազատության եւ հասարակական կարծիքի նկատմամբ: ԼՂՀ գերագույն դատարանի կոլեգիան հերթական անգամ անտեսեց լրատվամիջոցների եւ լրագրողական կազմակերպությունների բողոքներն ու կոչերը: Ավելին, այդ ատյանը չփոխեց մոտեցումը գործի քննությանը, չձերբազատվեց գործը քրեականացնելու ստերեոտիպից եւ, ըստ էության, հաստատեց ստորին դատարանի վճիռը՝ պատժի երկու տարով հետաձգումը ներկայացնելով իբրեւ «մեծահոգություն»:

ԼՂՀ-ում այսօր առկա մթնոլորտն ու մամուլի նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը հուշում են, որ առաջիկա երկու տարում այդ վճիռը դամոկլյան սրի նման կախված է լինելու մեր գործընկերոջ գլխին, փաստորեն զրկելու է նրան մասնագիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունից:

Հաշվի առնելով Հայաստանի ու Արցախի քաղաքական եւ իրավական դաշտերի ու դրանցում առկա գործընթացների փոխկապվածությունը՝ Հայաստանի ժուռնալիստների միությունը եւ Երեւանի Մամուլի ակումբը կանխատեսում եւ խոր մտահոգություն են արտահայտում, որ Վահրամ Աղաջանյանի նկատմամբ կիրառված պատիժը կարող է շղթայական ռեակցիայով անդրադառնալ նաեւ Հայաստանի լրատվամիջոցների ու լրագրողների վրա՝ սահմանափակելով խոսքի ազատությունը մեր երկրում:

Այս համատեքստում մտահոգիչ են «Առավոտ» օրաթերթի թղթակից Սաթենիկ Սեյրանյանի նկատմամբ արդեն իսկ կիրառվող գործողությունները, որոնք մենք գնահատում ենք իբրեւ խոսքի ազատության դեմ հերթական ոտնձգություն:

Հայաստանի ժուռնալիստների միությունը եւ Երեւանի Մամուլի ակումբը անհետաստ գործողությունների պատվիրատուներին ու հեղինակներին կոչ են անում սթափվել եւ սեփական պատասխանատվության այսրոպեական բավարարման համար չոտնահարել ժողովրդավարական արժեքները:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ 27»

ՀՀ գլխավոր դատախազը նույնպես չընդունեց Գագիկ Ջհանգիրյանի հրաժարականը

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժինն ապրիլի 28-ին տարածած մի հայտարարությամբ տեղեկացրեց, որ ՀՀ գլխավոր դատախազ Բորիս Նազարյանը մերժել է ՀՀ զինվորական դատախազ, հոկտեմբերի 27-ի գործի քննությունը վարող քննչական խմբի ղեկավար Գագիկ Ջհանգիրյանի ապրիլի 25-ին ներկայացրած հրաժարականի դիմումը: «ՀՀ գլխավոր դատախազ Բորիս Նազարյանը հիմք ունենալով այն, որ քննչական խումբը թույլ չի տվել ՀՀ իրական դատավարության օրենսգրքի պահանջների որեւէ խախտում, նրա բոլոր գործողությունները եւ հարուցած միջնորդությունները հիմնավորված են ու բխում են օրենքի պահանջներից, ցուցում է տվել իրական գործի նախաքննությունը զինվորական դատախազության վարույթում շարունակելու մասին: Քննչական խմբի որեւէ անդամ ախտանշից չի ազատվել»:

ՀՀ զինդատախազն իր դիմում հրաժարականի հիմնավոր փաստարկ է նշել քննչական բաժնում ստեղծված բարոյահոգեբանական վիճակը, որն, ըստ էության, առաջացել է այն բանից հետո, երբ ՀՀ նախագահը Գ. Ջհանգիրյանին արգելեց խորհրդարանական լսումներ անցկացնել: Չէ՞ որ մինչ այդ քննչական խմբի ղեկավարն ազատ էր քննարկումներ ծավալելու հարցում եւ չի էլ ժխտել այդ հանգամանքը: Միայն պատճառաբանել է. «ԵԿՄ-ի հետաքրքրությունն այս գործի նախաքննության նկատմամբ պետք է սահմանափակել միայն այն շրջանակում, որ նրանք շահագրգռված են, որպեսզի հանցագործությունը բացահայտվի» (Գ. Ջհանգիրյանի մարտի 10-ի ասուլիսից):

Տես էջ 2

ՊՈՊԱԳԻԿ

ՈԵՊԼԻԿ

Մեկ էլ մեր Շանդիբինն ունենք

Խորհրդարանում քաղաքական կյանքը եռում է այնպես, ինչպես ջուրը կրակին դրված կաթսայում: Որեւէ շաբաթ չի բոլորվում առանց աղմկահարույց բանսարկությունների, որոնք հաջորդվում են երկարաձգ ու հաճախակի խորհրդակցություններով, քննարկումներով, կրքոտ ելույթներով: Սակայն էլ սովորաբար եզրահանգվում են ՀՀ նախագահի իմփիչմենթի գործընթացը սկսելու առաջարկությամբ: Հետո, սովորության համաձայն, շփվելով լրագրողների հետ, ուրույն ձեւով ներկայացրեց իր արժեքավոր տեսակետները: Ասենք, ազգային հեռուստատեսության հարցին Թռչունիչը Քոչարյանի գահընկեցության անհրաժեշտությունը փաստորեն ժխտեց, սակայն նույն օրն ու նույն տեղում «ԱՐ» հեռուստաընկերության հարցին պատասխանելով, պահանջը վերահաստատեց: Հաջորդ օրն էլ նույն պահանջը պայմանավորեց ոչ թե Ջհանգիրյանի ելույթի հանգամանքով, այլ Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի անդամակցության հարցում Քոչարյանի դիրքորոշմամբ: Սակայն իսկ անհայտ մնաց, թե ինչ է ուզում Թռչունիչը: Բայց դա էական չէ, քանի որ նման պատգամավորների անկայունությունը հետհամայնավար երկրների խորհրդարաններում պարտադիր է: Համաձայնենք, անցումային շրջանում չի կարելի իսպառ վերացնել նախորդ վարչակարգի արժեքները, այսինքն խորհրդարանում պետք է լինեն բոլոր խավերի ներկայացուցիչները: Խորեն Սարգսյանը մինչեւ ցական աջակից, մասնաբեմ մասնավորապես Խորեն Թռչունիչին: Ջինդասախազ Գագիկ Ջհանգիրյանի Աժ-ում ունեցած հայտնի ելույթից հետո Խորեն Թռչունիչն առաջիններից մեկը հանդես եկավ ՀՀ նախագահի իմփիչմենթի գործընթացը սկսելու առաջարկությամբ: Հետո, սովորության համաձայն, շփվելով լրագրողների հետ, ուրույն ձեւով ներկայացրեց իր արժեքավոր տեսակետները: Ասենք, ազգային հեռուստատեսության հարցին Թռչունիչը Քոչարյանի գահընկեցության անհրաժեշտությունը փաստորեն ժխտեց, սակայն նույն օրն ու նույն տեղում «ԱՐ» հեռուստաընկերության հարցին պատասխանելով, պահանջը վերահաստատեց: Հաջորդ օրն էլ նույն պահանջը պայմանավորեց ոչ թե Ջհանգիրյանի ելույթի հանգամանքով, այլ Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի անդամակցության հարցում Քոչարյանի դիրքորոշմամբ: Սակայն իսկ անհայտ մնաց, թե ինչ է ուզում Թռչունիչը: Բայց դա էական չէ, քանի որ նման պատգամավորների անկայունությունը հետհամայնավար երկրների խորհրդարաններում պարտադիր է: Համաձայնենք, անցումային շրջանում չի կարելի իսպառ վերացնել նախորդ վարչակարգի արժեքները, այսինքն խորհրդարանում պետք է լինեն բոլոր խավերի ներկայացուցիչները: Խորեն Սարգսյանը մինչեւ պատգամավոր դառնալը կարծես թե վարորդ էր: Իմիջիայլոց, մի այդպիսի ներկայացուցիչ կա նաեւ Ռուսաստանի Պետդումայում՝ հանրահայտ «рабочий депутат» Շանդիբինը, որին, ավաղ, Պետդումայի փոխնախագահ Լյուբով Սլիսկային անպատվելու պատճառով մեկ ամսով զրկել են ձայնի իրավունքից:

Մեր ժողովրդավար երկրում Խորեն Թռչունիչին բոլոր պարագաներում այդ արհավիրքը չի սպառնում: Նա էլ անվերջ ելույթ է ունենում ու անվերջ մամուլի միջոցով հաղորդակցվում հասարակայնության հետ: Որպեսզի քաղաքական առաջնորդի կերտվող կերտարն էլ ավելի հստակ ու ընկալելի լինի ազգաբնակչության տարբեր խավերի կողմից, համարձակվենք տալ որն Սարգսյանին մի քանի օգտավետ խորհուրդներ. ասենք, խորհրդարանի դահլիճում ու միջանցքներում թզբեռ չքաշել, իսկ ելույթների ընթացքում «հաշվանդամ» բառը չօգտագործել, քանի որ այդպիսինը չկա հայոց լեզվի բառապաշարում: Նույն իմաստը կարելի է արտահայտել «հաշմանդամ» բառի միջոցով: Մտքերն էլ արտահայտելիս պետք է նախօրոք որոշել, թե ի՞նչ ես ուզում ասել ու ինչպե՞ս դա պետք է ասվի: Սակայն իսկ բաղձալի նպատակը՝ համալրել ազգի առաջնորդների շարքերը, բավականին հասանելի կլինի:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռոբերտ Քոչարյանը ստեղծո՞ւմ է իր կուսակցությունը

Սկիզբը էջ 1

Քաղաքական մի շարք այլ մեկնաբաններ եւս կարծում են, որ նոր աջ ազգայնական ուղղվածության կուսակցության ստեղծումը օրակարգում է, եւ այս հայտն է, որ առավելագույն հնարավորությունը կտա Ռոբերտ Քոչարյանին հաջող մարտավարություն իրագործելու եւ իշխանությունը կենտրոնացնելու իր ձեռքում: Բնութագրական է, որ «Կայունություն» խումբը վերջերս նույնպես շեշտում է նոր կուսակցություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Վերլուծաբանների կարծիքով, «Կայունությունը» կարող է հավակնել նախագահական կամ իշխանության կուսակցություն դառնալու դափնեկրակին: Հնարավոր Հովհաննիսյանը, որն ամենաակնկալող է իր արտահայտություններում, նշեց, որ առաջնայնությունը նախագահների օրինակը պատահական չէ: Քանի ելցինը չէր ստեղծել իր քաղաքական հենարան կուսակցությունը, նրա գործունեությունն անընդհատ տեղատատվում էր, իսկ նորընտիր նախագահ Վլադիմիր Պուտինի հաջողությունն էապես առնչվում է «Եդինստվո» միավորման ստեղծման, ինչպես նաեւ ռուսաստանյան Պետդումայում «Եդինստվոյի» ունեցած մեծ հաջողության հետ: Այսպիսով, Ռոբերտ Քոչարյանին առաջարկում են հետեւել Վլադիմիր Պուտինի օրինակին, որը. ա) ստեղծեց իր քաղաքական հենարանը, բ) աջակցեց նրա հաջողությունը Պետդումայում եւ գ) Պետդումայում նրանց աջակցությամբ կձեւավորի իր կառավարությունը:

Հայկական տարբերակում այս ամենը կարող է նշանակել, որ նախագահական կուսակցության ստեղծումը գրեթե անխուսափելի է դարձնում գործող խորհրդարանի լուծարումը, ինչպես նաեւ նոր կառավարության ձեւավորումը: Հայաստանի ատիմանադրությունը կիսանախագահական է, բայց փաստացի այն մեծ լծակներ է ընձեռում նախագահին, սակայն այդ լծակներից լիարժեք օգտվել յուրաքանչյուր նախագահ կարող է միայն այն պարագայում, եթե ունի աջակից եւ գաղափարակից ուժ խորհրդարանում՝ մեծամասնության տեսքով, եւ հանգիստ կառավարություն: Հակառակ դեպքում ստեղծվում է արտակարգության տեղատատվություն, որից դուրս գալու յուրաքանչյուր քայլ իրականում մեկ քայլ առաջ է, երկու քայլ՝ ետ: Վկան հոկտեմբերի 27-ից հետո ստեղծված կառավարությունը, որտեղ փորձ արվեց համադրել եւ երկրապահի, եւ հանրապետականի, եւ ՀԺԿ-ի համար ցանկալի թեկնածուներին զուտ նախագահի ընտրյալների հետ: Ցանկացած կառավարություն, որը միասնական թիմ չէ, դատապարտված է ցածր օգգ ունեցող աշխատանքի, իսկ նման աշխատանքն առավել բարդեցնում է պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, այսինքն՝ բնականորեն նվազեցնում նախագահի վարկանիշը եւ փոխարցնում նրա ընտրազանգվածը:

Հրաժեշտ «Իմ կուսակցությունն իմ ժողովուրդն է» կարգախոսին

Ռոբերտ Քոչարյանի կողմից իշխանության քաղաքական տեխնոլոգիաների հանդեպ ունեցած կասկածամտության հաղթահարումը կարող է նախանշել նոր շրջան, այսինքն՝ 98 թ. արտահերթ նախագահական ընտրություններում նրա դավանած «Իմ կուսակցությունն իմ ժողովուրդն է» ոչ քաղաքական եւ զգացմունքային կարգախոսի վերաիմաստավորում, որն իրականում կարող է դառնալ ոչ թե ընտրազանգվածի եւ համակիրների շարքերի նոսրացում, այլ ընդհակառակը՝ դրանց որոշակիացում: Հակառակ դեպքում մնում է անհասկանալի, թե ո՞ր գաղափարախոսությունից ծնված քաղաքականությունն է իրականացնում հանրապետության նախագահը եւ հասարակության ո՞ր շերտերի կայուն վստահությունն է վայելում: Վստահության ճգնաժամի հաղթահարման լրջագույն ելքերից մեկը՝ հստակ քաղաքական դաշտի ստեղծումն է, ուր հայտնի է, թե ով ինչ է դավանում եւ ով ում է աջակցում, եւ ոչ թե կատարվում են անընդմեջ փոխակերպումներ եւ գունափոխություններ: Ռոբերտ Քոչարյանը նախորդ Աժ-ում չուներ մեծամասնություն: «Հանրապետություն» խմբակցության քայքայման արդյունքում ծնված «երկրապահ» պատգամավորական խումբն ընդամենը կոնյունկտուրայի ծնունդ էր: 99 թ. մայիսի 30-ի ընտրությունների արդյունքում ձեւավորված եւ այսօր գործող Աժ-ում Ռոբերտ Քոչարյանը դարձյալ չունի քաղաքական կայուն հենարան: Դա ակնհայտ էր անգամ նախընտրական շրջանում: «Միասնությունը» Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի քաղաքական հենարանն էր, եւ միայն նրանց լծորդմամբ՝ Ռոբերտ Քոչարյանի: Հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունից հետո առավել քան դժվար է պատկերացնել «Միասնություն» եւ Ռոբերտ Քոչարյան երկարատեւ ու համախումբ գործունեություն: Ուստի, նախագահը պետք է ընտրություն կատարի: Հայաստանում բազմաթիվ կուսակցություններ կան, որոնք արդեն կրում են հնարավոր եւ անհնարին անունները՝ խոսքերով եւ ծրագրերով դավանում են աշխարհում ներկայումս գործող գաղափարախոսությունները, սակայն իրականում դրանց ջախջախիչ մեծամասնությունը անգաղափար եւ անորոշ կառույցներ են. կօգտվի նախագահը նրանց ցուցանակից, թե կնախածեռնի իրենը, ցույց կտա ժամանակը, համենայն դեպս, «Միասնություն» միավորումից նրան առավել աջակցող միավորը, որքան էլ տարօրինակ թվա, կարող է լինել ՀԺԿ-ն կամ, համենայն դեպս, ՀԺԿ մի հատվածը: Թեեւ չի բացառվում, որ նախագահը կփորձի ստեղծել նոր միավոր: Նախագահական կուսակցություն դառնալու համար շատերը ցանկություն կհայտնեն, կամ ինչպես Նոր կտակարանում Քրիստոսն էր ասում՝ կոչտաառոտեն իմ պատմուճանը եւ վիճակ կգցեն կոճակների համար: Թեեւ չմոռանանք նաեւ, որ իշխանության կուսակցությունները սովորաբար կարճատեւ կենսագրություն են ունենում եւ հեղեղված են լինում պատեհապաշտներով:

Արամ Սարգսյանը հանդիպեց Միխայիլ Կասյանովին

Սկիզբը էջ 1

Ինչ վերաբերում է Իտեռայի հետ խնդիրներին, Արամ Սարգսյանի եւ Իտեռա ընկերությունների միջազգային խմբի ղեկավար Իգոր Մակարովի միջեւ ապրիլի 27-ի բանակցություններից հետո որն Մակարովը Սնարի թղթակցին հայտնել է, թե ՀՀ կառավարությունը եւ Իտեռան եկել են ընդհանուր հայտարարի Հայաստան գազի մատակարարման ուղեղած պարտքերի վերակառուցման շուրջ: Այսպանով հանդերձ, Իգոր Մակարովը Հայաստանի պարտքը Իտեռային սահմանել է 30 հազար ԱՄՆ դոլար, երբ հայկական կողմն, ի դեմս ՀՀ էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանի, պնդում է, թե պարտքը չի գերազանցում 20 հազար դոլարը: Ըստ Մոսկվայում պտտվող որոշ տեսակետների, Իտեռան արհեստականորեն մեծացրել է Հայաստանի պարտքն իրեն էներգաբաշխիչ ցանցերի մասնավորեցման հարցում ՀՀ իշխանությունների վրա ճնշում գործադրելու համար, իսկ հիմա էլ չի ցանկանում խոստովանել պարտքի իսկական չափը՝ դեմքը չկորցնելու համար:

Դավիթ Զադոյանը մեկնաբանելով Հայաստանի խորհրդարանի էներգաբաշխիչ ցանցերը սեփականաշնորհման ցուցակից բացառելու որոշումը, նշել է, թե այն բխում է Իտեռայի շահերից եւ լավ հնարավորություն ընձեռում Իտեռային առավել լավ պատրաստվել հեռագա մրցույթին:

ՀՀ պատվիրակության հետ հանդիպմանը ՌԴ առաջին փոխվարչապետ Մ. Կասյանովը խոսել է Ռուսաստանին Հայաստանի ընդհանուր պարտքի մասին՝ 112 մլն դոլար: Նախատեսվում է, որ պարտքի մի մասը կվերադարձվի ունեցվածքի ձեւով, մյուս մասը՝ Հայաստանից Ռուսաստան մատակարարվող ապրանքների ձեւով, որոնք կարող են օգտագործվել Չեչնիայի վերակառուցման կարիքները հոգալու համար:

ՀՀ գլխավոր դատախազը նույնպես չընդունեց Գագիկ Ջհանգիրյանի ...

Սկիզբը էջ 1

«Հայկական ժամանակը», վկայակոչելով գինդասախազությանը մոտ կանգնած մի անձնավորության, երեկվա իր համարում խոսում է քննչական խմբի «բարոյահոգեբանական» վիճակի վրա ներգործող եւս մի խոչընդոտի մասին՝ գործի բացահայտմանը խոչընդոտում են ՀՀ ՆԳՆ եւ ԱԱ նախարարությունները: Այդ պատճառով էլ Գ. Ջհանգիրյանն ու ԵԿՄ-ն պահանջում էին ԱԱ եւ ՆԳ նախարարների փոփոխություն: Ուզում ենք կրկին մեջբերում կատարել ՀՀ գինդասախազի մարտի 10-ի ասուլիսից, որտեղ ճիշտ հակառակ միտքն արտահայտվեց. «Քննչական խմբին հնարավոր աջակցություն եւ օժանդակություն են ցույց տալիս ԱԱ եւ ՆԳՆ օպերատիվ հետախուզական խմբում չընդգրկված կառույցներն ու նրանց ղեկավարները»:

Հակված ենք ենթադրելու, որ հիշյալ նախարարությունները խոչընդոտներ են հարուցել միայն վերջերս ԵԿՄ անդամ եւ ՆԳՆ քրեական պատիժների իրականացման վարչության պետ Մուշեղ Սաղաթելյանին աշխատանքից ազատելուց հետո: Բայց, որքան մեզ հայտնի է, Մ. Սաղաթելյանը բոլորովին վերջերս է ազատվել աշխատանքից եւ այդ ժամանակամիջոցում մեղադրյալների հետ քննչական գործողություններ չեն կատարվել: Ուրեմն, ինչո՞ւմ է արտահայտվել այդ խոչընդոտը, որի մասին բաց չեն խոսում, բայց որը մթնոլորտ է շիկացնում քննչական խմբին հրաժարականի մղելով:

ԵՏԼԱԲԵՄՈՒՄ

«Միասնությունը» մնաց մենակ՝ առանց «Կայունության»

Երեկ նախատեսված խումբ-խմբակցության միացյալ նիստը չկայացավ

«Միասնություն» խմբակցությունը երեկ «Կայունություն» խմբի հետ պետք է գումարեր համատեղ նիստ, սակայն նշանակված ժամին Աժ-ում էր գտնվում «Կայունություն» խմբից լոկ մի պատգամավոր՝ Վրեժ Շահգելդյանը, որն այդպես էլ չմտավ նիստերի դահլիճ՝ «Միասնության» հետ քննարկելու ստեղծված իրավիճակը: «Միասնության» ղեկավար Անդրանիկ Մարգարյանը հրաժարվեց մեկնաբանել «Կայունության» դրժած խոստումը: Դիտորդների կարծիքով, սակայն, բացակայության պատճառը բավական թափանցիկ է. հինգշաբթի «Կայունությունը» ողջ խմբով հանդիպել էր հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որին հետեւած ազգային հեռուստատեսության հարցազրույցում խմբի ղեկավար Վարդան Այվազյանն ասերկբա պատշաճանել էր Ռոբերտ Քոչարյանի վերջին քայլերը՝ շեշտելով, որ հանրապետության նախագահը գործել եւ գործում է Սահմանադրության շրջանակում: Երեկ նրանց բացակայությունը «Միասնության» նիստից նշանակում է, որ «Կայունությունը» փորձում է վերակողմնորոշվել՝ անցնելով կշեռքի ծանր նժարի կողմը, ինչը բնութագրական է այս խմբի գործելակերպին:

Դիտորդները փաստում են նաեւ, որ «Կայունություն» խումբը վարչապետից վիրավորված է կառավարության վերջին փոփոխությունների ընթացքում իրենց խմբից որեւէ մեկին նախարարական պորտֆել կամ գոնե փոխնախարարի պաշտոն չառաջարկելու համար: Եթե «Կայունության» դիրքորոշումը միայնակ գործելու՝ «Միասնությունից» անկախ կայունանա, ապա խորհրդարանական մեծամասնության դիրքերն էապես կթուլանան, հանգի քվեարկությունների ընթացքում կորցնել «Կայունության» 23 ձայները, նշանակում է կորցնել խորհրդարանում ձայների 2/3 հավաքելու բոլոր հույսերը: Խորհրդարանը լուծարելու հեռանկարը գնալով առարկայանում է, իսկ դրա միակ, սակայն ժամանակավոր կասեցման միջոցը նախագահի պաշտոնանկության գործընթացի ծավալումն է: Բայց առանց 85 ձայնի ոչ ոք չի կարող նման խնդիր բարձրացնել: Հետեւաբար հանրապետության նախագահի դիրքերը, կարող ենք արձանագրել, որ առավել ամրանում են: Չմոռանանք նաեւ ՀԺԿ շարքերում առկա տարակարծությունները: ՀԺԿ-ն հստակ բաժանվում է նախագահամետ եւ վարչապետամետ թեւերի: Առաջին կողմնորոշման գաղափարախոսը եւ հիմնավորողը ՀԺԿ քաղաքական քարտուղար, Աժ պատգամավոր Հմայակ Հովհաննիսյանն է, որը կարող է առանձնանալ խմբակցությունից՝ ստեղծելով մի նոր պատգամավորական խումբ: Ի հետեւանս՝ խորհրդարանում այլեւս ոչ մի քաղաքական ուժ կարող է չունենալ հստակ ընդգծված մեծամասնություն: Եթե իրադարձությունները զարգանան այս ուղիով, ապա Ռոբերտ Քոչարյանին կարող է նաեւ անհրաժեշտ չլինել ներկա խորհրդարանի լուծարումը: Նախագահի առաջարկած յուրաքանչյուր վարչապետ եւ նրա կազմավորած կառավարությունը հնարավորություն կունենան խորհրդարանում հավաքել վստահության անհրաժեշտ ձայներ:

Ն. Գ.

Ռոբերտ Քոչարյանը ստեղծո՞ւմ է իր կուսակցությունը

Սկիզբը էջ 1

Քաղաքական մի շարք այլ մեկնաբաններ եւս կարծում են, որ նոր աջ ազգայնական ուղղվածության կուսակցության ստեղծումը օրակարգում է, եւ այս հայտն է, որ առավելագույն հնարավորությունը կտա Ռոբերտ Քոչարյանին հաջող մարտավարություն իրագործելու եւ իշխանությունը կենտրոնացնելու իր ձեռքում: Բնութագրական է, որ «Կայունություն» խումբը վերջերս նույնպես շեշտում է նոր կուսակցություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Վերլուծաբանների կարծիքով, «Կայունությունը» կարող է հավակնել նախագահական կամ իշխանության կուսակցություն դառնալու դափնեկրակին: Հնարավոր Հովհաննիսյանը, որն ամենաակնկալող է իր արտահայտություններում, նշեց, որ առաջնայնության նախագահների օրինակը պատահական չէ: Քանի ելցինը չէր ստեղծել իր քաղաքական հենարան կուսակցությունը, նրա գործունեությունն անընդհատ տեղատատվում էր, իսկ նորընտիր նախագահ Վլադիմիր Պուտինի հաջողությունն էապես առնչվում է «Եդինստվո» միավորման ստեղծման, ինչպես նաեւ ռուսաստանյան Պետդումայում «Եդինստվոյի» ունեցած մեծ հաջողության հետ: Այսպիսով, Ռոբերտ Քոչարյանին առաջարկում են հետեւել Վլադիմիր Պուտինի օրինակին, որը. ա) ստեղծեց իր քաղաքական հենարանը, բ) աջակցեց նրա հաջողությունը Պետդումայում եւ գ) Պետդումայում նրանց աջակցությամբ կձեւավորի իր կառավարությունը:

Հայկական տարբերակում այս ամենը կարող է նշանակել, որ նախագահական կուսակցության ստեղծումը գրեթե անխուսափելի է դարձնում գործող խորհրդարանի լուծարումը, ինչպես նաեւ նոր կառավարության ձեւավորումը: Հայաստանի ատիմանադրությունը կիսանախագահական է, բայց փաստացի այն մեծ լծակներ է ընձեռում նախագահին, սակայն այդ լծակներից լիարժեք օգտվել յուրաքանչյուր նախագահ կարող է միայն այն պարագայում, եթե ունի աջակից եւ գաղափարակից ուժ խորհրդարանում՝ մեծամասնության տեսքով, եւ հանգիստ կառավարություն: Հակառակ դեպքում ստեղծվում է արտակարգության տեղատատվություն, որից դուրս գալու յուրաքանչյուր քայլ իրականում մեկ քայլ առաջ է, երկու քայլ՝ ետ: Վկան հոկտեմբերի 27-ից հետո ստեղծված կառավարությունը, որտեղ փորձ արվեց համադրել եւ երկրապահի, եւ հանրապետականի, եւ ՀԺԿ-ի համար ցանկալի թեկնածուներին զուտ նախագահի ընտրյալների հետ: Ցանկացած կառավարություն, որը միասնական թիմ չէ, դատապարտված է ցածր օգգ ունեցող աշխատանքի, իսկ նման աշխատանքն առավել բարդեցնում է պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, այսինքն՝ բնականորեն նվազեցնում նախագահի վարկանիշը եւ փոխարցնում նրա ընտրազանգվածը:

Հրաժեշտ «Իմ կուսակցությունն իմ ժողովուրդն է» կարգախոսին

Ռոբերտ Քոչարյանի կողմից իշխանության քաղաքական տեխնոլոգիաների հանդեպ ունեցած կասկածամտության հաղթահարումը կարող է նախանշել նոր շրջան, այսինքն՝ 98 թ. արտահերթ նախագահական ընտրություններում նրա դավանած «Իմ կուսակցությունն իմ ժողովուրդն է» ոչ քաղաքական եւ զգացմունքային կարգախոսի վերաիմաստավորում, որն իրականում կարող է դառնալ ոչ թե ընտրազանգվածի եւ համակիրների շարքերի նոսրացում, այլ ընդհակառակը՝ դրանց որոշակիացում: Հակառակ դեպքում մնում է անհասկանալի, թե ո՞ր գաղափարախոսությունից ծնված քաղաքականությունն է իրականացնում հանրապետության նախագահը եւ հասարակության ո՞ր շերտերի կայուն վստահությունն է վայելում: Վստահության ճգնաժամի հաղթահարման լրջագույն ելքերից մեկը՝ հստակ քաղաքական դաշտի ստեղծումն է, ուր հայտնի է, թե ով ինչ է դավանում եւ ով ում է աջակցում, եւ ոչ թե կատարվում են անընդմեջ փոխակերպումներ եւ գունափոխություններ: Ռոբերտ Քոչարյանը նախորդ Աժ-ում չուներ մեծամասնություն: «Հանրապետություն» խմբակցության քայքայման արդյունքում ծնված «երկրապահ» պատգամավորական խումբն ընդամենը կոնյունկտուրայի ծնունդ էր: 99 թ. մայիսի 30-ի ընտրությունների արդյունքում ձեւավորված եւ այսօր գործող Աժ-ում Ռոբերտ Քոչարյանը դարձյալ չունի քաղաքական կայուն հենարան: Դա ակնհայտ էր անգամ նախընտրական շրջանում: «Միասնությունը» Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի քաղաքական հենարանն էր, եւ միայն նրանց լծորդմամբ՝ Ռոբերտ Քոչարյանի: Հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունից հետո առավել քան դժվար է պատկերացնել «Միասնություն» եւ Ռոբերտ Քոչարյան երկարատեւ ու համախումբ գործունեություն: Ուստի, նախագահը պետք է ընտրություն կատարի: Հայաստանում բազմաթիվ կուսակցություններ կան, որոնք արդեն կրում են հնարավոր եւ անհնարին անունները՝ խոսքերով եւ ծրագրերով դավանում են աշխարհում ներկայումս գործող գաղափարախոսությունները, սակայն իրականում դրանց ջախջախիչ մեծամասնությունը անգաղափար եւ անորոշ կառույցներ են. կօգտվի նախագահը նրանց ցուցանակից, թե կնախածեռնի իրենը, ցույց կտա ժամանակը, համենայն դեպս, «Միասնություն» միավորումից նրան առավել աջակցող միավորը, որքան էլ տարօրինակ թվա, կարող է լինել ՀԺԿ-ն կամ, համենայն դեպս, ՀԺԿ մի հատվածը: Թեեւ չի բացառվում, որ նախագահը կփորձի ստեղծել նոր միավոր: Նախագահական կուսակցություն դառնալու համար շատերը ցանկություն կհայտնեն, կամ ինչպես Նոր կտակարանում Քրիստոսն էր ասում՝ կոչտաառոտեն իմ պատմուճանը եւ վիճակ կգցեն կոճակների համար: Թեեւ չմոռանանք նաեւ, որ իշխանության կուսակցությունները սովորաբար կարճատեւ կենսագրություն են ունենում եւ հեղեղված են լինում պատեհապաշտներով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրատուն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊՍՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

տնտեսություն

Անշարժ գույքի գներն, ինչպես տնտեսությունը, շարունակում են անկում ապրել

Պրոցեսը շատ է երկարում, եւ չի բացառվում «կրախը», գնահատում են անշարժ գույքի բորսայում

«Ազգը» վերջերս անդրադարձել էր անշարժ գույքի գների կտրուկ անկմանը, տուկայում տիրող մեծայալ վիճակին: Հիշեցնենք բոլորային գրասենյակներից ստացված տեղեկությունները՝ շարունակվում է բնակարանների գների կտրուկ նվազումը, յուրաքանչյուր մեկ գնորդին բաժին է ընկնում 100 վաճառող, հերթով փակվում են անգործության մատնված գործակալությունները, եւ բնակարան վաճառողները ստիպված իրենց բնակարանները վաճառելու համար դիմում են «գիր ու կաղ» անողների օգնությանը: Գործակալություններից ստացված տեղեկությունները հաստատվեցին նաեւ Քոչարի փողոցի հարեւանությամբ գտնվող «սեւ տուկայում», որտեղ հոծ ամբոխի մեջ մատների վրա կարելի էր հաշվել գնորդներին, մնացածները՝ անհույս վաճառողներ էին՝ «վաճառում եմ» ցուցանակներով: Ընդհանրապես, այդպիսի ցուցանակների այսօր ամեն քայլափոխի կարելի է հանդիպել Երեւանի ցանկացած վայրում՝ բնակելի տների ու խանութների պատերին: Ամբողջ մայրաքաղաքն այսօր վերածվել է մի մեծ տուկայի, սակայն, առավել տագնապահարույց է շրջանների վիճակը, որտեղ արդեն բնակարանների գները հաշվում են ոչ թե հազարավոր դոլարներով, այլ հարյուրներով: «Արդեն երկու-երեք ամիս է, շաբաթ-կիրակին տուկայում եմ անցկացնում, մնացած օրերը՝ հեռախոսի մոտ, բայց ոչ մի կերպ հարմար գնով հարմար գնորդ չեմ գտնում», դժգոհեց տարեց մի մարդ: Իսկ գներն, իսկապես, այսօր հարմար չեն ոչ մեկին՝ ոչ վաճառողին, որն ափսոսում է վաճառել իր բնակարանը գրեթե չնչին գներով, եւ ոչ էլ գնորդին, որի դրամն ուղղակի չի բավականացնում: Մի խոսքով, մի կողմից հսկայական ճանկությամբ մեկնարկվող տներ, մյուս կողմից՝ ցածր գնողունակություն:

Հայաստանում ամենաշատ հանդիպող ցուցանակը՝ «վաճառվում է»

Անշարժ գույքի բորսայում գրեթե հաստատեցին վերոհիշյալը, սակայն ներկայացված թվերը որոշ չափով ավելի մեղմացված էին, քան գործակալությունների ու բրոքերների տվյալները: Այսպես, ըստ բորսայի գնահատականների, այս տարի, անցյալ տարվա համեմատ, բնակարանների գները մոտ 40-45 տոկոսով նվազել են: Նմանապես, մոտ 10-12 տոկոսով նվազել է անշարժ գույքի առուվաճառքը երեւանում, իսկ հանրապետությունում ավելին՝ 14 տոկոսով: Այսպես, ըստ նոտարական գրասենյակներից ստացված տվյալների, 1998 թվականին երեւանում կատարվել է առուվաճառքի 9080 գործարք, իսկ 99-ին՝ 8197: Տուկայում տիրող վիճակի պատճառն այսօր բոլորին է հայտնի՝ ծանր սոցիալական վիճակ, արտագաղթ եւ այլն: Բորսայում հաստատելով դրանք, նաեւ ավելացրեցին՝ «իրավիճակը լիովին հասկանալի է, քանի որ անշարժ գույքի տուկան արտացոլում է տնտեսության վիճակը»: «Այն քաղաքականությունը՝ տնտեսության կառավարման, սեփականաշնորհման, հարկային ոլորտում, որ տարվում էր տարիներ շարունակ, անողայմանորեն իր կնիքը դրեց է դներ տնտեսական ակտիվության վրա, ինչը նշանակում է նաեւ տուկայի ակտիվություն», ասաց բորսայի նախագահ Արտյոմ Պրիբիլսկին: Ըստ նրա, անշարժ գույքի գների անցյալ տարիների դինամիկան այսպիսին է. գների աճ նկատվեց միայն 95-ի երկրորդ կեսին, ինչը շարունակվեց 96-ին, իսկ 97-ին նկատվեց գների որոշ կայունացում, «ինչը պայմանավորված էր ոչ թե տնտեսության ներքին ակտիվությամբ, այլ արտաքին ազդակներով՝ հիմնականում տրանսֆերտների աճով»: Գների նոր անկումը սկսվեց 98-ին, 99-ին անկումը շարունակվեց, իսկ այս տարի պրոցեսը ոչ միայն կանգ չի առնում, այլ երկարում է: «Մինչեւ ու՞ր» հարցի պատասխանը կարճ էր՝ «եթե այսպես շարունակվի, կհայտնվենք կրախի առջեւ»: Այստեղ բորսայի նախագահը հավելեց, որ այդ կրախը, թերեւս, այդքան էլ սարսափելի չէ գնորդի կամ սեպհականատերի համար (սակայն, նկատի ունենանք, որ ցածր եկամուտներով ապրող բնակչությունը, եթե ի վիճակի չէ էժան գներով բնակարան ձեռք բերելու, ապա ավելի ցանկալի է տեսնել բարձր գներ, բայց՝ նաեւ բնակչության եկամուտների աճ ու աշխատող տնտեսություն-Գ.Մ): Ընդհանրապես նշենք, որ ինչքան էլ բորսայի նախագահը փորձում էր հոռետեսական եզրակացություններ չանել, այնուամենայնիվ, փաստերը հանգեցնում են դրան:

«Միջազգային տուկայի համեմատ մենք պաղուասների երկրում ենք»

«Ինչպիսի՞ն է համեմատությունը միջազգային գների հետ» հարցին ի պատասխան պրն Պրիբիլսկին առաջարկեց չհամեմատել, կատակով բերելով պաղուասների օրինակը. այս ցեղում, եթե հաշիվը 5-ից ավելի է, ապա կարճ ասում են՝ շատ: Հիմա մեր եւ միջազգային գների համեմատությունն է:

Ինչ վերաբերում է գների տեղաշարժերին ըստ գոտիների, ապա, բորսայի տվյալներով, վերջին շրջանում ի տարբերություն կենտրոնի բնակարանների, որոշ չափով նկատվում է հետաքրքրություն ծայրամասային, էժան շրջանների (Հարավ-արեւմտյան, Արարատյան, Նորքի հեռավոր զանգվածվներ, 15-16 թաղամասեր) մեկենքի բարեկարգ բակի, ավտոտնակների առկայությունը, նույնիսկ՝ շրջապատը: Իսկ այս առումով երեւանյան շենքերը, չհաշված մարզերը, ուղղակի անմխիթար վիճակում են: Բնակարանների գնահատման մյուս կարեւոր պայմանը շենքի տիպն է, հարկը (ջուր, վերելակ եւ այլն), հետո նոր հարեւանները եւ այլն: Ի դեպ, այսօր երկրորդական է դարձել բնակարանի բարեկարգ լինելը, քանի որ նրանք, ովքեր այսօր ի վիճակի են բնակարան գնելու, հնարավորություն ունեն նաեւ այն վերանորոգելու: Ընկել են նաեւ շինանյութի գները, քանի որ զանգվածային շինարարությունը, որն առավելապես ակտիվացավ 95-96 թթ-ին, այսօր գրեթե կանգ է առել: Այսպիսով, նույնիսկ սեփականաշնորհման կարգով, տներ չեն կառուցվում, քանի որ ունեւորները չունեն երկրի հեռագայի մասին ոեալ երաշխիքներ եւ, հետեւաբար՝ այստեղ անշարժ գույք ունենալու ցանկություն:



Տուկան տնտեսության հայելին է, ինչքան տնտեսությունն անկում է, նույնքան էլ՝ գները

Ա. Պրիբիլսկու կարծիքով, անգամ 95-96-ի գների որոշ բարձրացումը ինչ-որ տեղ արհեստական էր, քանի որ բնակարաններ գնողները հիմնականում դրսից եկած տրանսֆերտների հաշվին ապրող բնակչության հսկայական զանգվածն էր: Սակայն դա երկար չէր կարող շարունակվել առանց իրական տնտեսության աշխատանքի ու բնակչության իրական եկամուտների: Այդպես էլ եղավ, տրանսֆերտները, մասնավորապես, 98-ի ռուսաստանյան ճգնաժամի արդյունքում խիստ նվազեցին, ու բնական էր սպասել բնակչության գնողունակության կտրուկ անկում: «Մենք դեռ այն ժամանակ գնահատում էինք, որ բնակարանների գների անկման պատճառը միայն էներգետիկ ճգնաժամը չէ, այլ կան ավելի խորը տնտեսական պատճառներ, որոնք սկսվել էին դեռեւս 92-94 թթ.-ին՝ սկսված տնտեսական սխալ քաղաքականության հետեւանքով», ասաց բորսայի նախագահը:

Այսպիսով, դատելով ստեղծված իրավիճակից, մնում է արձանագրել, անշարժ գույքի տուկան տնտեսության հայելին է, եւ քանի դեռ Հայաստանի տնտեսությունը մահամերձ է, անշարժ գույքն այստեղ կգնահատվի միջազգայինի համեմատ ծիծաղելի չափանիշներով, օրեցօր կավելանա սոցիալապես վատթարացող բնակչության շրջանում գնորդներ փնտրող անհույս վաճառողների թիվը, իսկ գնորդներ, եթե անգամ գները հասնեն ամենանվազագույնին, չեն գտնվի: Ու «կրախը» կլինի ոչ թե տոսկ ենթադրություն ու կանխատեսում, այլ դառն իրողություն:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

ԲՆԱԿԱՐԱՆԱՇՈՒՏ

Գյումրիի 150 ընտանիք ժամանակավոր տակներից կտեղափոխվի մշտական բնակարաններ

Այս տարի Գյումրիում ժամանակավոր կացարաններում ապրող 100-150 ընտանիքի կտրվի բնակարանների գնման վկայագիր: Ասել է թե՝ բնակարան գնելու միջոցները փոխհատուցող փաստաթուղթ: Այս ծրագիրն իրագործում են ՀՀ կառավարությունը եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), որի միջոցով էլ ԱՄՆ կառավարությունը ծրագրին հատկացրել է 1,5 մլն դոլար:

Երեկ արդեն գյումրեցի 5 ընտանիքների շնորհվեցին վերոհիշյալ վկայագրերը: Այդ առթիվ Գյումրի էին ժամանել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը, ՀՀ տարածքային կառավարման եւ քաղաքաշինության հարցերը համակարգող նախարար Լեոնիդ Հակոբյանը, USAID-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Դայան Ցիցոսը: Հետաքրքրական էր ՀՀ ազգային անվտանգության նախարար Կառլոս Պետրոսյանի ներկայությունը պատմիրակության կազմում մի առիթով, ինչպիսին էր բնակարաններ գնելու վկայագրերի հանձնումը: Ինչեւէ, վկայագրերը տրվեցին մինչ այժմ ներից տարեկան 2 հազարն այս ծրագրով կարող են ապահովվել բնակարաններով: Սա այն դեպքն է, երբ ծրագիրը փորձնական փուլից հետո գնահատվի նպատակահարմար ու շարունակվի: «Նման ծրագիր իրականացվել են Ռուսաստանում, ուրիշ շատ երկրներում, նշեց Դայանա Ցիցոսը: Այստեղ էլ կարելի է հաջողության հասնել, միայն թե լինի տեղական իշխանությունների՝ գործի պատասխանատու ստանձնումը»:

USAID-ն այս տարի աղետի գոտու համար ընդհանուր առմամբ նախատեսել է 15 մլն դոլարի օգնություն: Անդրադառնալով այս ու ընդհանրապես դրսի միջոցների տրամադրման փաստին, Ռոբերտ Քոչարյանը նշեց, թե 1997-ից սկսած փորձ է արվել նոր մոտեցումներ դրսեւորել աղետի գոտու վերականգնման գործընթացում, քանզի Հայաստանի սուղ միջոցներով իրագործել լիակատար վերականգնում անհնար է: Ըստ ՀՀ նախագահի, հատկապես վերջին երկու տարիներին ՀՀ բյուջեից զատ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներառումը ավերված բնակարանների վերաշինման



տնակներում ապաստանող ընտանիքներին, ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ամրագրելով փորձնական ծրագրի մեկնարկումը: Ինչպե՞ս է աշխատելու ծրագիրը: Բնակարան գնելու վկայագրերը նախատեսվում են աղետի գոտու այն բնակիչների համար, որոնք 1988-ի երկրաշարժի հետեւանքով կորցրել են իրենց բնակարանները, որեւէ փոխհատուցում դրանց դիմաց չեն ստացել ու հաշվառման են կանգնած բնակարանային հերթացուցակում: Վկայագրերը, որոնք, ի դեպ, գնահատված են Գյումրիի բնակարանների շուկայական գներով, կարող են օգտագործվել ՀՀ տարածքում բացառապես պատրաստի բնակարաններ ձեռք բերելու նպատակով: Գնորդները հնարավորություն կունենան նաեւ իրենց միջոցները գումարել վկայագրերին՝ առավել թանկարժեք բնակարան ունենալու համար եւ ընդհակառակը, ստանալ վկայագրով սահմանված գումարի այն մասը, որը չեն օգտագործի բնակարանը գնելիս: Աղետի գոտում այսօր շուրջ 2000 ազատ բնակարաններ դրված են վաճառքի: Այնպես որ, այս առումով, վերոհիշյալ ծրագիրը կնպաստի նաեւ անշարժ գույքի շուկայի կարգավորմանը, քանիցս շեշտեց Ռոբերտ Քոչարյանը: Թե ՀՀ նախագահը, թե Շիրակի մարզպետարանի մյուս բարձրաստիճան հյուրերը ընդգծեցին ծրագրի արդյունավետությունն այն իմաստով, որ փաստորեն ավելի քիչ ծախսերով, քան կպահանջեր նոր բնակարանների շինարարությունը, հնարավոր է մեծաթիվ ընտանիքների ապահովել մշտական տանիքով: Հավանաբար այս պատճառն էլ խիստ հուզել էր Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանին, որը ցփոթում ու մոռանում էր իր հյուրերի տիտղոսներն ու անունները նրանց ներկայացնելիս: Հուզվելու առիթ անշուշտ կար: Աղետի գոտու՝ մինչեւ հիմա առանց մշտական կացարանի մնացած 25 հազար ընտանիքներ: Ասվեց, որ աշխատանքներում շատ բարենպաստ հունի մեջ է: Այսպես, լրագրողների հետ ճեպազրույցում պրն Քոչարյանը նշեց, որ երկու օր առաջ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն աղետի գոտու վերականգնմանը միտող օգնության ծրագիր է ներկայացրել ԱՄՆ-ում Քըրք Քըրքորյանի հետ՝ ծանրակշիռ արդյունքներով: Թե կոնկրետ ի՞նչ արդյունքներ, ՀՀ նախագահը խոստացավ հրապարակել մոտ ամիսներին՝ իրերի դրությունը վերջնականապես պարզվելուց հետո: Իսկ ահա բյուջեի մասով աղետի գոտին վերաշինելու աշխատանքներում մասնակցությունը խիստ թերի է, ընդունեց ՀՀ նախագահը: Այս տարվա բյուջեով նույնիսկ առանձին հատկացում՝ աղետի գոտու վերականգնման աշխատանքներում չի նախատեսվում: Գումարներ պիտի տրամադրվեն սեփականաշնորհման մասով: Բայց, այնուամենայնիվ, Ռ. Քոչարյանը խոստացավ, որ մոտակա մեկ ամսվա ընթացքում բյուջեի միջոցներով կփորձեն սկսել շինարարական աշխատանքներ Գյումրիում:

Ցավոք, ամենահնչեղ աշխատանքների դեպքում էլ այսօր արդեն պարզ է, որ Ռ. Քոչարյանի նախատեսնշած ժամկետը, թե 2001-ին աղետի գոտի հասկացությունից ի սպառ կծերբազատվենք, իրական չէ: «Իմ հաշվարկներով մենք մոտ մեկ տարի ուշանում ենք, ասաց նախագահը: 2000 թ.-ը կարելի է կորած տարի համարել, ի նկատի ունեմ հայտնի իրադարձությունները, որոնք չեմ էլ ցանկանում մանրամասնել»: Չմանրամասնելով, այնուամենայնիվ, «Հայոց աշխարհի» թղթակցի դիտարկմանը, թե Հայաստանի քաղաքական դաշտն էլ այսօր աղետի գոտի է կարծես, նախագահը պատասխանեց, թե գիտակցում է եւ տեղեկացված է, որ ժողովուրդն իրենից առավել վճռական քայլեր է սպասում: Հավաստեց նաեւ, որ այդ քայլերը կլինեն ոչ շատ ուշ:

ԱՐԱՐԱՏ ԳԲԻԳՈՐՅԱՆ

ԱԶԳ

հրատարակախոսություն

Սկսել եւ ավարտել

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ակզբում լրագրային հոդվածի համար ոչ ավելի ընդարձակ մեջբերում. «Ոչ մի ժողովուրդ դեռեւս չի կազմակերպվել-դասավորվել գիտության եւ բանականության հիմունքներով... Սոցիալիզմն ըստ էության արդեն պիտի աթեիզմ լինի, քանզի հենց ամենաառաջին տողից ազդարարել է, որ աթեիստական սահմանում է եւ մտադիր է կայանալ բացառապես գիտության եւ բանականության հիմունքներով: Բանականությունը եւ գիտությունը ժողովուրդների կյանքում մշտապես, հիմա եւ դարերի սկզբից, սոսկ երկրորդական եւ հարակից դեր են կատարել, այդպես էլ կկատարեն մինչեւ դարերի վերջը: Ժողովուրդները կազմավորվում եւ շարժվում են մեկ ուրիշ, հրամայող եւ իշխող ուժով. սակայն որի ծագումն անհայտ է ու անբացատրելի: Այդ ուժը մինչեւ վերջ հասնելու անհագուրդ ցանկության, միաժամանակ վախենալը ժխտելու ուժն է: Կյանքի անընդմեջ եւ անխոնջելի հաստատման եւ մահի ժխտման ուժն է: Կյանքի ոգին, ինչպես Կտակարանն է ասում, «կենդանի ջրի աղբյուրներն» են, որոնց ցամաքմամբ այնպես սպառնում է Հայությունը: Ակունքը գեղագիտական է, ինչպես ասում են փիլիսոփաները, ակունքը բարոյական է, ինչպես նույնացնում են դարձյալ նրանք... Ժողովրդական ամբողջ շարժման նպատակը, յուրաքանչյուր ժողովրդի մեջ եւ նրա կեցության յուրաքանչյուր շրջանում, միայն ու միայն Աստծո որոնումն է, իր Աստծո՝ անպատճառ սեփական, եւ հավատը նրա նկատմամբ, որպես միակ իսկական: Աստված ամբողջ ժողովրդի սինթետիկ անձնավորումն է, առնված նրա սկզբից մինչեւ վերջ: Դեռ երբեք չի եղել, որ բոլոր կամ շատ ժողովուրդներ մեկ ընդհանուր Աստված ունենան, սակայն միշտ եւ յուրաքանչյուրն ունեցել է առանձնահատուկը: Ազգությունների ոչնչացման հատկանիշ է, երբ աստվածները սկսում են դառնալ ընդհանուր: Երբ աստվածներն ընդհանուր են դառնում, ապա մեռնում են աստվածները եւ հավատը նրանց նկատմամբ, իրենց իսկ ժողովուրդների հետ: Ինչքան ավելի ուժեղ է ժողովուրդը, այնքան ավելի առանձնահատուկ է նրա Աստվածը: Դեռ երբեք չի եղել ժողովուրդ առանց կրոնի, այսինքն՝ առանց չարի եւ բարու հասկացության... Երբ շատ ժողովուրդների համար ընդհանուր են դառնում չարի եւ բարու մասին ըմբռնումները, այդժամ վերանում են ժողովուրդները, եւ այդժամ չարի եւ բարու միջեւ բուն տարբերությունը սկսում է ջնջվել ու անհետանալ...»:

Դոստոեւսկու՝ վերի շարադրանքին ագուցված հերթական այս միտքը, որ հետագա երկխոսության մեջ հանգում է գլխավորապես Աստծո եւ Արդարության, ճշմարտության նույնացման, ինքնըստինքյան միակն ու եզակին չէ խոշոր մտածողների, հումանիստների, փիլիսոփաների՝ մեզ թողած իմացությունների օվկիանոսում: Ընդ որում, յուրաքանչյուր հանճարեղ մտածողության արգասիք յուրացնելուց հետո, սովորաբար թվում է, թե բնագավառը, ասպարեզը, ըմբռնումն իր գաղտնիքները բացահայտել է լիուլի, այլեւս ծեռքբերելիք չունես: Այնինչ մոլորություն է դա՝ շարքային, առտնին, անմիջապես հասկանալի, քանզի շուտով մեկ ուրիշն է իր մտքերը պարգեւում, իր մտահանգումները մատուցում քեզ՝ անվճար ու անհատույց: Պարզապես իմացիր՝ ինչ եւ վերջրու գիրքն ու կարդա:

Եվ ահա, թվացյալ այս պարզ հոլովույթի մեջ հանկարծակի եւ անսպասելի, դավադիր ու անհարմար մի միտք սկսում է շաղափել ուղեղդ. Աստված իմ, տեսնես մեր կառավարիչներն ու «քաղաքական այր» կոչվածները կարդո՞ւմ են ընդհանրապես: Որեւէ եղանակով մտահոգ ու շահագրգի՞ռ են գիտելիք ավելացնելու, իմացություն կուտակելու «գործընթացով»: Լավ, ասենք, հաստատուն գրքերի համար ժամանակ չունեն (շատ ավելի կարեւոր գործերով են զբաղված), գոնե՝ մամո՞ւլ... այն էլ ոչ միայն տեղական ու ոչ միայն, եթե իրենց մասին «բան կա», կարդո՞ւմ են:

Որովհետեւ թվում է նաեւ ու համոզվում ես, որ եթե հետեւեին այդ ամենին, չէին լինի «ելքի» այս տենդագին փնտրտուքը, հեռուստակրանային ամենօրյա վարժանքներն առ այն, թե ինչ է հարկավոր «երկիրն այս վիճակից հանելու» համար:

Նախ, «վիճակից հանելու» հոգսերն ու անելիքները համաժողովրդական քննարկման նյութ չեն ամենեւին (եթե չեն հետաքրքրում ընտրողների գլխի տակ փափուկ բարձ դնելու նպատակ), ժողովրդավարության մեխանիկային չենթակա քայլեր են, այլ միակ եւ բուն գործն այն բոլոր անձանց, ովքեր հանդգնել են (այո՛, հանդգնել, քանի որ մեծ համարձակություն է պետք խոստանալու, ապա խոստացածը չկատարելու համար) դեռեւս կատարություն ստանձնել: Արդեն քանի տարի ոչ աղետ է եղել, ոչ արհավիրք է ու տարաժամ, փառք Աստծո, ոչ համաճարակ կա, ոչ պատերազմ, շրջափակման «նաղլը» վաղուց է պայթել փուչիկի պես եւ առարկայական ու ենթակայական պատճառաբանությունների լիմիտը լրացել: Պարզապես մնում է ենթադրել, ապա եւ՝ համոզվել, որ մարդկանց մի խումբ է հայտնվել վերեւներում, ովքեր իրենց պարտականությունները չեն կատարում ու չեն կարողանում կատարել, իրենց գործը չգիտեն ու չեն անում:

Այլ խնդիր է, թե ով եւ ինչու հասցրեց «այս վիճակին»: Սա հարակիցն է, ածանցյալը, թեեւ վստահ պիտի լինել, որ հենց հարակից ու ածանցյալ հանգույցը (ով եւ ինչու) անշրջելի քանդելու պայմաններում է ի հայս գալու «ելքի» (ինչպես) այնքան ընդծալի բանալին:

Գրում, հանդես են գալիս մեր անխոնջները, մտահոգ-ցավող-տառապող անձինք: Արդեն քանի տարի իր հոգու եւ մտքի աղաղակն է հնչեցնում Միլվա Կապուտիկյանը, իր խորունկ մտորումներին եւ աղաչանքին է հաղորդակից դարձնում Պերճ Զեյթունցյանը, վերլուծում եւ սկուտեղով մատուցում, «ելքերն» է առաջարկում Արկադի Վարդանյանը, Արշակ Սադոյանի մռայլ ու հոգնաբեկ ձայնի մեջ վհատության ելեւէջներ էլ են հայտնվել, եւ... եւ գոնե մամուլ թերթո՞ւմ են մեր տնաբենները (ավելի ճիշտ՝ տնաբանները):

Այլապես այս ի՞նչ «խրախճանք է ժանտախտի պահին»: Երկրի ծով հոգսերը թողած, այդ ի՞նչ ծովեր, օվկիանոսներ, օդային հեռուներ են չափչփում առաջին, երկրորդ, երրորդ շարասյուների առաջին, երկրորդ, երրորդ ու մնացյալ համարակիրները... Դավադիր ու անհարմար մի միտք եւս՝ գուցե հենց այդ ծրի «տուրի՞զմն» էր նրանց մտրակում նախընտրական քափ ու քրտինքների մեջ: Չէ, այդքան պարզունակ եւ միամիտ չլինենք, մտրակող այլեւայլ շարժառիթներ էլ կային ու կան:

Եվ կլինե՞ն... Ահա, «ելքի» մի բանալի եւս: Հենց արմատախիլ արվեցին ծրիակյաց հրապույրները, շատ բան կկարգավորվի ու կընկնի տեղը:

Ու համարյա թե «լսում» եմ կատմբախառն (լավագույն դեպքում) առարկությունը. դա «տուրիզմ» չէ, այլ անհրաժեշտ կարիքի հաստատում եւ ամրագնդում, Հայաստանի միջազգային վարկի կայունացում, օտար ներդնողներ ներգրավելու, օգտատեր բանակցություններ վարելու հնարավորություն եւ այլն: Stop, stop, stop. առավել եւս, որ անգլերեն բառերի գործածումը հեռուստաեթերն-«պետականորեն» է արտոնված: Սպասե՛ք, պարոնայք, սպասե՛ք: Նախ, արդեն քանի տարի գնում-գալիս ենք, եւ ի՞նչ, արդյունքների մեջ թաղված չգիտենք որ բարիքից ու հարմարությունից օգտվենք... Ապա, եթե հաստատման-կայունացման-ներգրավման առաքելություն իրականացնողները մեր շատ լավ ծանոթներն են՝ էկրանից, խորհրդարանից, լրագրային եւ կենսագրական էջերից, ապա ավելի քան երկմտելի եւ խնդրահարույց է դառնում այդ եռուզեռի «ռեզոնը»:

Ավելին, եթե մեր գործելակերպի առանցքը պատմության, ոչ վաղ եւ ոչ ուշ անցյալի դառը փորձն ու դասերը չեն, այլ «օրվա նորույթ» գլոբալիզացիային գլխովին հպատակվելը, ապա իսկույն եւեթ ծայն պիտի բարձրացնի խոշոր մտածողը. «Երբ աստվածներն ընդհանուր են դառնում...» եւ այլն: «Գլոբալիզացիա» ասվածն էլ հենց ուղիղ եւ անպատճառ ճանապարհով տանում է դեպի համընդհանուր գլանում, տափակեցում, հանգեցնելով ամենայն ինչի «ինտեգրման», այդ թվում ու առաջին հերթին՝ մտածողություն, բարոյականություն, խիղճ, հավատ, ապրելակերպ ու վարվելակերպ: Մնտեսության «ինտեգրումն» այլեւս պարզապես վերածվում է ծայրեծայր հպատակեցված տարածքի «սեփականաշնորհված» բոլոր բնագավառների եւ ասպարեզների զուտ թքվածնային գոյության. կուզեն կբացեն շիթի փականը, կուզեն՝ կփակեն... էլ ինչո՞ւ ենք զարմանում ու զայրանում հայկական եթերը ողողած օտարամատ մակուլատուրայի առատությունից. չէ՞ որ ինտեգրվու-ուուռ՝ում ենք, չէ՞ որ ուրիշ կերպ չի լինում, առավել եւս ուժեղքույլ փոխհարաբերություններում: «Օտարամատ» եւ «օտարամուտ» ասելով շարունակում ենք կարճատրեն ենթադրել սոսկ թրականը, թեեւ վերջինիս հանդեպ նույնպես արգելակները վաղուց վերացել, խցանները թռել են: Հաշվառվող ու չհաշվառվող առեւտրի մեջ քանի՞ տոկոս է կազմում թրական ապրանքը՝ քառասո՞ւն, հիսո՞ւն, ավելի՞... ոչ մի տվյալ չի հրապարակվում, եւ ո՞վ պիտի հրապարակի՝ արդյոք «տոնավաճառաբնակ» Հայկանուշ մորքուրներն ու Գալուստ հորքարնե՞րը: Ահա եւ հույսերս նրանց վրա, առաջ ենք մղում փոխշահավետ (՞) առեւտուրը:

Ինտերցիան, հարկավ, բնական երեւույթ է, երկրիս երեսին գոյություն ունեցող կանոններից մեկ կայունը: Իսկ ելման կետը, որտեղից ծայր է առել «մեր» ինտերցիան, որքանո՞վ է հուսալի, անդունդ չտանող:

Հեռանկարային, ռազմավարական կանխագծումների, ծրագրումների, կանխագուշակումների ոլորտներից ի սկզբանե հեռու ենք եղել, այդպես էլ շարունակում ենք... միանգամայն իրավացի ենք՝ այդ նույն ինտերցիայով: Հեռանկարի մասին ոչինչ չգիտեմ: Ոչ ոք էլ ստույգ չի կարող ասել: Թեեւ բոլորիս մեկ առ մեկ հայտնի է, որ հեռանկարն անմխիթարական է:

Մի մեջբերում եւս այս անգամ (ներողություն եմ խնդրում) ութ տարի առաջ գրված սեփական հոդվածից. «Մեր ազգի հայրերն ինչպիսի՞ն են եղել, ինչպես հիմա՞ ենք պատկերացնում, ներկայացնում: Փառաբանում ենք, հպարտանում: Տպագրում ու պահում, երբեմն էլ հյուրերին եւ մտերիմներին ենք նվիրում մեր թագավորների, զորավարների, պետական ու քաղաքական գործիչների դիմանկարները: Պատմական քարտեզներ էլ ենք տպագրում, այսօրվա թաքինակ-տարածքի հետ համեմատելիս՝ ընդամենը նվաստացուցիչ ախուվախով: Ո՞վ ծվատեց ու բզկտեց, ո՞վ քամուն տվեց մեր լայնարձակ հայրենիքը, եթե ոչ նրանք: Սակայն միշտ՝ մեզ հետ միասին: Միայն միասին»:

Երբ մեր փառավոր անցյալի մատնանշումներն ենք անում, գոնե իմքներս հավատո՞ւմ ենք փոքրիշատե տանելի ժամանակահատվածի գոյությանը: Թե՞ գնում-գնում եւ դեմ ենք առնում Տիգրան Մեծին, որը ժամանակի եւ տարածության առումով համարյա թե չի զանազանվում առասպելի Հայկից...

Ինչո՞ւ է այդպես եղել: Առեղծվածային, անբացատրելի այդ ի՞նչ մատնություն, Արդարություն եւ սեփական կայուն Հավատի (հավատը լոկ բաղկացուցիչ է այստեղ) արմատավորում եւ անշեղ հետեւում դրան, իսկ եթե անցյալում անպայման պիտի լիներ դա, եւ այսօր գուցե թե վիճակը կարող էր տագնապահարույց լինել, սակայն ոչ աղետաբեր, ապա ներկայումս օրախնդիր է:

Վերջերս հեռուստատեսային վերլուծական մի հաղորդման ընթացքում միտք արտահայտվեց, թե ՀՀ նախագահը, ԳԱԱ պրեզիդենտը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. կաթողիկոսը լավ կլիներ, եթե խորհրդակցեն ու առաջարկեն «ելքի» մշակման ու գործադրման մարմին՝ կազմված... երեւելի անձանցից: Երեւելիների դեմ ոչինչ չունենալով, համոզված եմ, սակայն, որ այդ գործն ավելի արդյունավետ ու նպատակահարմար կլիներ հանձնարարել մասնագետներին, իրազեկ եւ փորձառու մարդկանց, ում իմացության պաշարները գալիս են կարդացած գրքերից եւ կատարած գործերից ու ոչ ամենեւին կուսակցական փաստաթղթերից եւ համագումարներից: Կուսակցությունների դեմ էլ առանձնապես ոչինչ չունեմ. թեեւ քանակապես գիտնական պահանջները տվել-անցել են, ու եթե մինչեւ հիմա շոշափելի, ակնխոսանում են, որ կհասնեն, իսկ դա ամենեւին էլ «վիուկների որս» չէ, այլ հատուցման պահանջ եւ սթափեցում բոլոր տրամաչափի խարդախ-խաբեբաների համար,

բ) խոսքից վճռականորեն անցնել արտադրական առկա կարողությունների գործարկմանը, մարդկանց հնարավորություն տալ վստակել ու ապրել,

գ) ըստ ամենայնի խրախուսել եւ նպաստել սեփական, երկրի ներսի ներդնողի, գործարարի ձեռնարկումները,

դ) մանկական, մշակութային, իսկական բարեգործական հաստատությունների հանձնել կամ հողին հավատարեցնել այն ամենն, ինչ բարձրացել է Հայաստան-Արցախով մեկ՝ անաչխատ եկամուտներով, գոփումների եւ հանցավոր այլ գործարքների ճանապարհով,

ե) արմատապես բացառել հնարավոր բոլոր պայմանները, որոնք աղբյուր են ապօրինի հարստացման, կաշառակերության, ընտանեվարության եւ հովանավորչության,

զ) ասպարեզներից զանգվածաբար եւ խայտառակությամբ վռնդել գործը տաղալած անիրազեկ պաշտոնավորներին, պատահաբար եւ հանգամանքների բերումով լծակների մոտ հայտնված դուրսդրծուկներին...

Եվ այսպես ամբողջ այբուբենը՝ մինչեւ օ եւ ֆ:

Իսկ ինչպե՞ս, մի՞թե դա հնարավոր է, չի՞ հանգեցնի արդյոք նոր բախումների, առճակատումների, պայքարավանգության: Ո՛չ, հազար անգամ ոչ, սա նույնպես դիվական պատրվակ է, եւ վախեցողը երկու անգամ է մեռնում: Իսկ թե ինչպես իրագործել պայմանական եղանակով թվարկված այդ եւ մյուս կետերը, պատասխանը պարզից էլ պարզ է. հարկավոր է սկսել՝ ավարտելու հաստատամտությամբ, ավարտելուց հետո նոր տողից սկսելու հստակ հավատով:

Հիրավի, ավելի քան հավատացած պիտի լինեն իրագործողները, որ մարդկանց հոծ զանգվածներ հենց Արդարի եւ ճշմարտի որոնումների մեջ են (տես՝ մեջբերումը) եւ առկայության դեպքում դիմադրողականությամբ, թիկունք կանգնելու եւ վերականգնելու անսպասելի պաշարներ են մեջտեղ բերելու: Հարկավոր է միայն սկսել ու ավարտին հասցնել:

Վերջում՝ մի ներանձնական խոստովանություն: Հավատացնում եմ ընթերցողին, որ քանի տարի արդեն «հոգնել եմ իմ վշտից», ինչպես բանաստեղծն է ասում երգի իր խոսքերում: Ինչպես եւ շատ-շատերը ծեգնից: Խոստովանում եմ, որ անասելի կարոտել եմ դրական «պոզիտիվ» նյութին, այդ նյութով աշխատելուն: Փնտրել եմ, որոնել: Անգամ երազումս եմ տեսել: Քաղաքաթեատրանի վերջին հավաստիացումը եւ մեկ-երկու քայլերի իսկությունը, թե վերջ է դնելու երեւանի տեսն աղճատող-խաթարող շինությունների երեւան գալուն, ապօրինի շինարարությանը, կարծես թե նման մի նոր բատրոնի վրա: Եղածն էլ ի՞նչ է. թերեւս հինգերորդական մի ասիճանավոր եւ թաղային չորրորդական հեղինակություն: Եվ եթե օր առաջ չվերանա անպատկառության եւ լկտիության այդ «հուշարձանը», նշանակում է ոչինչ էլ պետք չէ սկսել՝ ավարտին հասցնելու համար:

Նշանակում է, ամեն ինչ սկսված է վաղուց եւ ավարտվելու վրա է, եւ ծայրից ծայր սակավօգուտ զբաղում էր թե սույն հոդվածը շարադրելը, թե տպագրելը, թե ընթերցելը...

Հոդվածի ռուսերեն տարբերակը լույս կտեսնի այսօրվա «Նովոյե Վրեմյա» թերթում

ԱԶԳ

Միջազգային

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼ

«Մեր հայրենիքն է խլված մեզանից»

Վերջին շրջանում լոնդոնյան ամենահեղինակավոր եւ ամենալուրջ թերթերից «Դի ինդիպենդենտը» հետեւողականորեն եւ ուշագրավ համարձակությամբ անդրադառնում է մեր մեծագույն ցավին՝ Հայոց եղեռնին: Հիշեցնենք, որ հունվարի 26-28-ը Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում, հրեաների Հոլոքոստին նվիրված միջազգային ֆորումի օրերին, թերթը հրապարակել էր Ռոբերտ Ֆիսքի «Հիշիր առաջին ցեղասպանությունը» հոդվածը (տես՝ «Լռությունը համաձայնության նշան է» հոդվածը «Ազգի» փետրվարի 5-ի համարում), որտեղ բացահայտ մեղադրական էր ներկայացված արեւմտյան պետություններին: Այս անգամ թերթն իր ապրիլի 24-ի համարում տպագրել է Ստամբուլում իր թղթակից Ջասմին Հաքլերի «Ցեղասպանության լուռ երեխաները զրկված են երդիկից» հոդվածը, որը եւ թարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ: Արժե երեւի, որ հատկապես մեր սփյուռքահայ հայրենակիցները նամակներով ողջունեն թերթի այս լուսաբանումները եւ փորձեն նեցուկ հանդիսանալ դրանց հեղինակներին: Իսկ հոդվածի վերջին հատվածի մասին ասենք, որ նման ակնարկները, հատկապես թուրքաբնակ հայերի կողմից, բոլորովին էլ տարօրինակ չեն:

Երանի շարան-շարան դուրս եկան եկեղեցուց՝ իրենց ծեռքերում ամուր բռնած Աստվածաշնչերը: Հագուստներից խունկն էր բուրում: Գլխավերեւում զանգն էր դողանջում: Հնամաշ անձրեւանոցներ հագած ծերունիներին հետեւում էին սեւեր հագած այրիները: Ենթադրվում էր, որ ցնծության տոն պետք է լիներ, բայց նրանց դեմքերը մռայլ էին: Նրանք ցեղասպանության զոհակներն էին:

Այսօր համայն աշխարհի հայկական համայնքները նշում են 85-րդ տարելիցը 20-րդ դարի առաջին ցեղասպանության, որի ընթացքում օսմանյան թուրքերի կողմից կոտորվեցին Անատոլիայի հայերից առնվազն 1 մլն հոգի: Ստամբուլի գեղազարդ եկեղեցու բակում հավաքված մարդիկ Թուրքիայի հայերի վերջին մնացորդներն էին: Անտիոքի կից մի փոքր գյուղից բացի, նրանք Թուրքիայի վերջին հայկական համայնքն են:

Բայց այսօր, երբ ամբողջ աշխարհն է հիշում նրանց տառապանքը, նրանք պարտավոր են լուռ մնալ: Թուրքիան ժխտում է, որ երբեւէ ցեղասպանություն է տեղի ունեցել, իսկ հայերին էլ արգելված է նշել զոհերի հիշատակը:

«Բայց մենք նշելու ենք, ասաց մի ծերունի, որը վախվորած չտվեց իր անունը: Մենք այստեղ՝ Ստամբուլում կայցելենք մեր մեռյալների շիրիմներին: Կասենք, որ սգում ենք նրանց, բայց ներքուստ մենք կսգանք նաեւ ցեղասպանությանը զոհ գնացածներին»:

Ծերունու մեծ հայրը 1915-ի ցեղասպանության զոհերից մեկն է եղել: «Այդ ժամանակ հայրս տասը տարեկան է եղել: Մեծ հայրս սպանված է եղել, իսկ ընտանիքի մնացած անդամներին նավ են նստեցրել Տրապիզոնում: Խառնաբփոթի մեջ հայրս բաժանվում է մորից եւ բարձրանում Ստամբուլ գնացող նավը: Մայրը նստում է Մարսել մեկնող նավը: Հայրս հետագայում իմանում է, որ մայրը կենդանի է, բայց տեսնելու առիթ չի ունենում», ասաց նա:

Ծերունին լաց եղավ: Նա դեռ ծնված էլ չի եղել, երբ այդ բոլորը տեղի են ունեցել, բայց տառապանքն, այնուամենայնիվ, ինչ-որ ձեւով փոխանցվել է նրան: «Գնացեք եւ անգլիացի պրոֆեսորներին հարցրեք մեր պատմության մասին, այնուհետեւ շարունակեց նա, մենք այդ բոլորը գիտենք, բայց չենք կարող պատմել: Պատմությունն արգելված է մեզ համար»:

Հայ զոհվածների համար զանգվածային գերեզմանատներ չկան Թուրքիայում: Չկան նաեւ հուշարձաններ, կամ հաղթանակ որակեցին:

Բեյօղլուի (Ստամբուլ) երեխաների եկեղեցու վերաբացումը Շահան արք. Սվաճյանի ձեռով (աջից 2-րդը):

«Մենք շատ նման ենք բնիկ ամերիկացիներին: Մեր հայրենիքն է խլված մեզանից», ասաց ծերունին: Արեւելյան Անատոլիայի իրենց պատմական հայրենիքում այսօր հայեր չկան: Երբեմն-երբեմն գյուղերից մեկում կարող ես հանդիպել մի խարխլված հայկական եկեղեցու: Դրանցից մեկին ես հանդիպեցի Հարավ-արեւելքում՝ Էնեսում: Քրդերը, որոնք այժմ ապրում են այդ գյուղում, ասացին, որ հայերը «տեղափոխվել» են մեկ ուրիշ գյուղ: Բայց մի տեղացի փորձիկ, այդ տեղով անցնող գեսը մատնացույց անելով, ասաց. «Ահա թե որտեղ սպանեցին հայերին»:

Ստամբուլում հայկական վերջին համայնքը նույնպես նվազում է: Երիտասարդ հայեր, դժգոհ այն հանգամանքից, որ Թուրքիայում զրկված են իրենց ինքնությունից ու պատմությունից, հեռանում են երկրից, գնում են Եվրոպա, Ամերիկա եւ նույնիսկ դեռի իրենց փոքրիկ, խեղճ Հայաստանի Հանրապետություն: «Չգիտեմ, հայերը Թուրքիայում կարո՞ւնակե՞ն գոյություն ունենալ, թե՞ ոչ, ասում է ծերունին թախծոտ, բայց եթե դու կորցրել ես քո տունը, ի՞նչ նշանակություն ունի, թե որտեղ ես ապրում»:

Նա արդարություն պահանջո՞ւմ է:

«Ինչպե՞ս կարող ես արդարություն պահանջել, երբ ապրում ես ոճիրը գործողների հետ կողք-կողքի», պատասխանում է նա իմ հարցին եւ խառնվում մյուսներին Ստամբուլի փողոցներում:

Նրանք ցեղասպանության զավակներն են, բայց նրանցից խլված է իրենց ինքնությունը:

Մյուս կողմից, փոքրիկ համայնքի մեկ ուրիշ անդամ, լրագրող եւ հրատարակիչ Մկրտիչ Մարկոսյանը գտնում է, որ, ի վերջո, դա չէ կարեւորը: «Եթե քո մեծ հայրը սպանել է իմ մեծ հորը, դրանով հարցը փակվել է: Դա անցյալին է վերաբերում: Ինչո՞ւ ես պետք է քեզ սպանեմ եւ տառապանքը շարունակեմ: Ավելի լավ է ապրենք միասին որպես եղբայրներ», ասում է նա:

ԱՅՑ

Մայիսի 2-ին Հայաստան է այցելելու ԳԴՀ Բունդեսթագի պատվիրակությունը

Հայաստանում Գերմանիայի դեսպանատնից ստացված մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մայիսի 2-5-ը Հայաստան կայցելի Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի արտաքին գործերի հանձնաժողովի պատվիրակությունը Հանս-Ուլրիխ Կլոզեի (Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) գլխավորությամբ: Պատվիրակության կազմում են Բունդեսթագի պատգամավորներ Ռայնհարդ Ֆրայհեր ֆոն Շոլեմերը (Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն) եւ Վոլֆգանգ Գեհրկեն (Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն): ՀՀ նախագահի, խորհրդարանի եւ կառավարության ներկայացուցիչների հետ կայանալիք հանդիպումների ընթացքում քննարկման նյութ կդառնան հայ-գերմանական երկկողմ հարաբերություններին, մասնավորապես խորհրդարանական մակարդակով առկա կապերին, կովկասյան տարածաշրջանի արտաքին քաղաքականության եւ անվտանգության արդի վիճակը, անդրկովկասյան երեք հանրապետությունների միջեւ ներքին հարաբերություններին եւ ժողովրդավարական բարեփոխությունների ընթացքին առնչվող հարցեր: Պատվիրակության կազմում ընդգրկված են երկուական պատգամավոր խորհրդարանական մեծամասնության դաշինքից եւ ընդդիմությունից:

Այցի ընթացքում նախատեսված է նաեւ հանդիպում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի հետ, որն ուսանել է Վիեննայում եւ Բոննում եւ տարիներ առաջ եղել հայ առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի հոգեւոր հովիվը:

Այազ Մութալիբովը մտադիր է վերադառնալ Ադրբեջան

ՄՈՍԿՎԱ, 28 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐ: Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը հայտարարել է Ադրբեջան վերադառնալու իր մտադրության մասին:

Նա համոզված է, որ Ադրբեջանի ժողովուրդը վաղուց չի հավատում այն հեքիաթներին, որ ամեն օր նրան պատմում է Հեյդար Ալիեւի վարչակարգի՝ վախի, բռնության եւ կոռուպցիայի վրա հիմնված քաղաքական մեքենան, իսկ մասնատված ընդդիմությունը բնակչության աջակցությունը չի վայելում: Վստահ լինելով այդ ֆոնի վրա իր սեփական վարկանիշի աճի եւ սոցիալական հիմքի ամրապնդման հարցում՝ Մութալիբովը հայտարարել է հասարակաքաղաքական կազմակերպության ձեւավորման մասին, որը կմիավորի իր բոլոր կողմնակիցներին:

Պատասխանելով այն հարցին, թե արդյոք ինքը չի վախենում պաշտոնական Բաքվի հետապնդումներից, Մութալիբովն ասել է, որ ինքը ծանր է տարել 1995-96 թթ. իրադարձությունները, երբ իրեն երկու անգամ կալանավորեցին եւ ցանկանում էին հանձնել Ադրբեջանին: Սակայն այն ժամանակվանից ի վեր հետապնդումները դադարեցին: Բացի այդ, նշել է նա, այսօր, երբ Ադրբեջանը բախում է Եվրախորհրդի դուռը, Ալիեւը չի կարող այդպես հանգիստ հաշվեհարդար տեսնել իր հակառակորդների հետ:

«Ես երբեք չեմ կառչել իշխանությունից եւ արյուն չեմ թափել այն պահելու համար: Ներկայիս վարչակարգը ցիրտ հակառակն է անում եւ վաղ թե ուշ սպիտված կլինի պատասխան տալ դրա համար: Ես ռեւանշիստ չեմ, սակայն դեռ կվերադառնամ Ադրբեջան եւ կասեմ իմ խոսքը» խոստացել է նախկին նախագահը:

Մութալիբովը կտրականապես հերքել է այն ենթադրությունները, թե իրեն ֆինանսավորում եւ աջակցում են Ռուսաստանի հատուկ ծառայությունները՝ Ադրբեջանում իշխանության վերադարձնելու նպատակով: Նման պնդումներն ալիեւյան վարչակարգի հերյուրանքներ են՝ իրենց քաղաքականությունն արդարացնելու եւ հասարակությանը հիմարացնելու համար: Նման մեղադրանքների ֆոնի ներքո շատ հարմար է բանտարկել, ցրել քաղաքական կուսակցություններ, ասել է Մութալիբովը: Իշխանությունները սաստիկ վախենում են ընդդիմության եւ ողջ հասարակության համախմբումից, այդ պատճառով հենց իրենք են տարբեր լուրեր ու հերյուրանքներ տարածում: Դա քաղաքական հակառակորդներին վարկաբեկելու փորձված համակարգ է, եւ Ադրբեջանի ներկայիս ղեկավարը հրապարակի տիրապետում է այդ արվեստին, նշել է նախկին նախագահը:

Կոսովոն եւ Իրաքը ՄԱԿ-ի եւ Արեւմուտքի ձախողումներն են

Պատերազմելը հաճախ ավելի հեշտ է լինում, քան խաղաղություն հաստատելը: Մեկ տարի առաջ ՆԱՏՕ-ի օդուժն սկսեց Հարավսլավիայի ռմբակոծումները: Ինը տարի առաջ հրե հեղեղ տեղաց Իրաքի բնակավայրերի վրա: Թվում է, թե երկու պատերազմներն էլ ավարտվել են ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի հաղթանակով. հարավսլավական զորքերը դուրս են եկել Կոսովոյից, իրաքյան ուժերը՝ Քուվեյթից: Բայց երկու դեպքում էլ խաղաղություն չի հաստատվել: Իրաքում դարձյալ իշխում է Սադդամ Հուսեյնը, Սերբիայում Սլոբոդան Միլոշեւիչը: Դաշնակից ուժերը, իհարկե, բացահայտ չէին խոսում այդ երկու անձանց տապալելու մտադրության մասին, բայց հույս ունեին, թե պարտությունից հետո երկուսն էլ արագորեն կտապալվեն: Այդպես չեղավ, եւ հիմա ՄԱԿ-ը որոնում է իր ծեռնարկումների շարունակությունը:

Արեւմուտքը հայտնվել է երկընտրանքի առջեւ, քանզի երկու դեպքում էլ խախտվել է տարածաշրջանային կայունությունը, եւ ինքնիշխանության թուլացումն անլուծելի խնդիրներ է ստեղծել:

Իրաքն Օսմանյան կայսրության տրոհման մի հեռավոր կերպափոխություն է, իսկ Հարավսլավիան Ավստրո-Հունգարական կայսրությունից մնացած ժառանգություն է: Իրաքը բազմաստղ է. հարավում շիա մահմեդականներն են, կենտրոնում՝ սուննի մահմեդականները, հյուսիսում՝ քրդերը: Երկրի մասնատումը կգրգռեր հարեւան Թուրքիայի եւ Իրանի ախորժակը, վերջ դնելով պարսկական եւ արաբական աշխարհների բազմադարյա հավասարակշռությանը, նոր ուժով կարծրացնելով քրդական հարցը: Իսկ դա մի նոր մղձավանջ կդառնար գերտերությունների համար:

Հարավսլավիայի դաշնայնությունն այսօր փաստորեն պատրանք է դարձել: Պաշտոնապես «լայն ինքնավարություն» վայելող Կոսովոն ըստ էության վերածվել է միջազգային հովանավորյալ տարածքի: ՄԱԿ-ի հանձնակատար Բեռնար Քուշները եւ միջազգային խաղաղարար ուժերը Կոսովոյում համառորեն փորձում են հաստատել բնակեցնել միմյանց հանդեպ ատելությամբ համակված սերբերին եւ ալբանացիներին: Մարզի ապագա կարգավիճակը մնում է անորոշ: Կոսովոյի վերադարձը Սերբիային թվում է աներեւակայելի, իսկ անկախության հռչակումը վտանգավոր կլիներ ամբողջ Բալկանյան թերակղզու համար: «Մեծ Ալբանիայի» ստեղծումն անվերահսկելի զարգացումներ կառաջացներ մասամբ ալբանաբնակ Մակեդոնիայում եւ անկանխատեսելի հետեւանքներ՝ Բուլղարիայում եւ նույնիսկ Հունաստանում: Լրատվամիջոցներն արդեն տեղեկացրել են, որ հարեւան Ալբանիայից Կոսովո է անցել միջազգային ահաբեկիչ Ուսամա բեն Լադենը: Դա կարող է էլ ավելի սրել լարվածությունը Բալկաններում: Դեռեւս Հարավսլավիայի կազմի մեջ մնցող Չեռնոգորիայում եւս իրավիճակը պայթյունավտանգ է:

Արեւմուտքի մեծ տերությունների կարծիքով, Բալկաններում անհնար է լուծում գտնել, քանի դեռ Միլոշեւիչը չի հեռացել իշխանությունից: Իսկ ամերիկացիները Սադդամ Հուսեյնի տապալումը նախապայման են համարում Իրաքի հետ հարաբերությունների կանոնավորման համար: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է ֆրանսիական «Պուեն» հանդեսը, տվյալ դեպքում անձերի խնդիր չկա: Այսպես, Բելգրադում ընդդիմադիր ուժերը եւս Կոսովոն համարում են սերբական վաղնջական ու սրբազան տարածք: Սադդամ Հուսեյնի տապալումից հետո էլ Իրաքը դժվար թե հրաժարվի Քուվեյթի տարածքը գրավելու հին մտադրությունից: Իսկ ՄԱԿ-ը իր անհեռատես գործողություններով կարծես հող է նախապատրաստում ապագա հակամարտությունների համար: Այլապես ինչո՞վ բացատրենք Իրաքի միակ ծովային նավահանգիստ Ուս Քասրը նրանից խլելու որոշումը:

Միջազգային քաղաքականության մեջ անձերի դերի գերագնահատումը հազվադեպ է լավ արդյունքներ տալիս: Բալկանների խնդիրը չի կարելի նույնացնել Միլոշեւիչի, Իրաքինը՝ Հուսեյնի, Չեչնիայինը Պուտինի հետ: Քաղաքական ու պետական գործիչներն անցողիկ են, մինչդեռ ժողովուրդների ու պետությունների շահերը հավերժական:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

ԱԶԳ

Մշակույթ

«Ամենեն զորավոր գիրքը կյանքն է»

Ուրախալի է, որ վերջին տարիներին Վիլյամ Սարոյանի մասին, Սարոյանի շուրջ խոսելու առիթները հաճախակի են դարձել: 1986-91 թթ. լույս տեսավ մեծ գրողի երկերի հառահատորը՝ տարբեր ժանրերի պատկանող լավագույն գործերի համեմատաբար ամբողջական ընդգրկմամբ: 1994-ին «Նախիր» հրատարակչությունը ընթերցողների սեղանին դրեց եւս երկու՝ «Իմ անուն է Սարոյան» հայերեն եւ «Հայն ու հայը» ռուսերեն ժողովածուները: Փոքրածավալ այդ հրատարակությունները մեծ հետաքրքրություն էին առաջացնում հենց նրանով, որ ի մի էին բերում Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ մշտապես առկա «հայկական մոտիվի» բազմաժանր այն գործերը, որոնք մինչ այդ անհայտ էին հայ ընթերցողին:

Այս շարքը լրացնելու է գալիս նույն հրատարակչության լույս ընծայած «Վիլյամ Սարոյան» ժողովածուն, որը կազմել եւ խմբագրել են Հրանտ Սաթեւոսյանը, Ֆելիքս Մելոյանը, Կարինե Մեսրոպյանը: Բավական ծավալուն այս գիրքը ամփոփում է մեծ գրողի պատմվածքների մի ընտրանի, խսեները գրողի եւ գրականության մասին, պատառիկներ որդու՝ Արամ Սարոյանի, նաեւ Մայքլ Աղեն կրտսերի հուշերից: Նյութերի մի մասն առնված է արտասահմանի հայալեզու մամուլից եւ առաջին անգամ է ներկայացվում հայաստանցի ընթերցողին: Նույնպես առաջին անգամ ժողովածուում ի մի են բերված Վ. Սարոյանի տարբեր տարիների հարցազրույցները, որոնք ամբողջության մեջ առավել հստակորեն են գծում անզուգական գրողի, քաղաքացու, հայրենասերի եւ պարզապես մարդու նրա դիմանկարը:

Ոչ իր մեղքով ծնված լինելով օտարության մեջ, Սարոյանն ապրեց այլ միջավայրում, գրեց ուրիշ լեզվով, բայց դա ամենեին չխանգարեց, որ նա լիներ մեկը՝ հայ ազգի այն փառահեղ տեսակից, որն անվերապահորեն հանճարեղ որակումն ունի: Որպես այդպիսին, նա հավերժի կողմն էր. նա էր, ում մեջ շարունակվում էր իր ազգի նախորդ մեծերի ոգին, Չարենցի բառերով ասած՝ երակն էր իր հնամյա ցեղի, եւ միաժամանակ նա, ում մեջ, ծննդյան իսկ պահից, սաղմնավորված էր ապագայի հունը: Կյանքի եւ գոյի նրա չափանիշները նման չէին սովորական մահկանացուների ընբռնածին. դրա համար էլ ամբոխի կամ քաղաքաբնակ ապին դաս հաճախ նրա արտահայտումը թվում էր տարօրինակ, միամիտ ու զավեշտական: Իսկ ինքը իրերին ու մարդկանց նայելու իր յուրահատուկ ներին այլն ուներ, որով ընդգրկում էր ոչ միայն դրսի, այլեւ ներսի տիեզերքը: Դա էր, որ վիթխարի լուսարձակի նման լուսավորում էր ամեն բանի էությունը եւ թույլ տալիս հետաքրքիր դրանք դնել բառային պարզ ու հստակ ձեւակերպումների մեջ: Ոչ թե սարսափած կամ սթափեցած, այլ զարմացած էր իր «լինելության արկածից» եւ աշխարհի վրա այլ բացելուց հետո գրի գաղտնիքը նույնպես հեթիաթի նման բացվեց նրա առաջ: Մարդկությունը մի հեռավոր երեխա էր, ինքը եւս երեխա էր ու կարծում էր, թե «գիրք ծառեն, ամպեն կուգա»: Երբ հասկացավ, որ «մարդ կգրե», սկսեց ինքն էլ գրել: Հաճույքով տվեց բառի իշխանությանը, հասկացավ «բառին լեզուն», բայց ներսում մշտապես կենդանի էր այն ճշմարտությունը, թե «բառեն առաջ մարդու հոգին է»: Ահա թե ինչու գրելը պարզապես ապրել էր նրա համար եւ առավել ևս բնական էր, որ «բանաստեղծ ու աղվեսագետ կարող է լինել բանաստեղծություններ ամենեւին չգրող մարդը»:

Վիլյամ Սարոյանի համար «ամենեն զորավոր գիրքը» հենց կյանքն էր՝ գոյը, շունչը: Այստեղից էլ աֆորիստիկ ձեւակերպումը՝ «Ես մեկն եմ, որ է»: Այստեղից էլ կյանքի ու մահի կենցաղային սահմանները ջնջող, խորքային նույնությունը տեսնող հայացքը՝ «Իմ մոռությունը մահին, մոռենալ է արդելուն: Նույն բանն են՝ լմննություն մը են»: Պայմանով, որ մահ կոչվածը ոչ անժամանակ, բնականոն լինի, երբ «ելեզի ալ չկրնար ոգսկցուցել»: Այդ դեպքում մահը ոչ թե թշնամի է, այլ բարեկամ: Այդպիսի մահը «օրհնություն է, մի վերջին հույս դիմացդ պարզված»:

Գոյի տիեզերական չափումների մեջ աշխարհը բեմ էր Սարոյանի համար, ուր գրողները դերասաններն էին՝ «ուրիշին ճանաչելու, ամեն մարդ լինել կարողանալու իմաստով»: Եվ քանի որ ամեն մարդ լինելը հենց իր էությունն է, ուրեմն «իմ բոլոր կերպարները ես ինքս եմ» կամ «իմ ամբողջ գրությունն մեկ ծեւով կամ մյուս ծեւով իմ փորձառություններն են»: Իրեն էր համարում աշխարհի ամենամեծ մարդը, թեեւ խոստովանում էր, թե ինքն իրեն երբեք չի հանդիպել:

Գոյության մեծ իմաստին հասու լինելով, նա պնդում էր, թե ճշմարտության գաղտնիքը հավասարակշռությունն է, քանզի «ամեն բան իր հակառակ կողմն ունի, չարը հավասարակշռվում է բարով, տգեղությունը՝ գեղեցկությամբ, խավարը՝ լույսով...»:

Ու թեեւ խոստովանում էր, որ ամեն ինչ գիտի այս աշխարհի մասին, այնուամենայնիվ, սիրում էր «այս աշխարհն այնպես, ինչպես կա»:

Սեւեռված էր դեպի ներսը, խորքը՝ առանց արտաքինն ու դուրսը արհամարհելու: Հաճույքով էր կրկնում Սոմերսեթ Մոեմի այն խոսքը, թե Սարոյանը ներսի եւ դրսի գրող է: Այդ ներսի ձայնն էր դարձյալ, որ ամերիկյան գրականության հինգ աստղերից մեկը համարվող գրողին խոստովանել էր տալիս, թե «ես չեմ կարող իմ ինքնության մասին մտածել հայությունից դուրս»: Եվ դրա համար իրեն պարտական էր զգում «այն անպատմելիին, որ մեր յուրահանչյուրի ներսում է»: Նա իրեն հայ էր զգում արյունով, հայոց լեզվի մասին մտածում էր, որ այն ստեղծվել է մարդկային ոգին ազնվացնելու համար եւ համոզված էր, թե «աշխարհի բռնությունը ի զորու չէ ընկճելու ազնվածին մեր ժողովրդին»: Գտնում էր, որ հայ մարդը չի առավինում ամբոխի զորությանը: Նրա ուժը անհատի իր կերտվածքն էր, եւ «ցեղին ազնվագույն հատկությունները կրնան ծաղկիլ միայն անհատին մեջ», բայց այն անհատների, ովքեր «կարող են ինքզինքին եւ իրենց ցեղը գնահատել»:

Աշխարհներ տեսած ու ամերիկյան «դրախտը» մինչեւ ուղնուծուծը ճաշակած գրողը վկայում էր, թե «Հայաստանեն ավելի մեծ տեղ չկա այս աշխարհի վրա, հայ ժողովրդեն ավելի մեծ ժողովուրդ մը չկա, քանի թե մենք հոս, մեր հողին վրա», իսկ օտարության մեջ ապրող հայերի ամենամեծ ողբերգությունը այն էր համարում, որ «նրանք զրկված են մարդկային ամենավսեմ հայրենիքի կյանքին մասնակից լինելու զգացումից»:

Հայի արյունն ու էությունը, սակայն, չէին խանգարում Սարոյանին կանգնելու աշխարհի ամեն մի էակի կողքին, լինելու մարդկության իբրեւ մեկ ընտանիքի անդամը: Այս մասին եւս ավելի դիպուկ վկայել է հենց ինքը՝ գրողը, պատկերավոր ձեւակերպմամբ «Ինձ ծանոթ է ամբողջ տեսությունը Սարոյանի, տխրիս հայի, որ ամբողջ աշխարհն է գրկում, համբուրում»:

ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բարի ծերունին, որ մանկան նման անկեղծ էր

Մայիս Ղարագյոզյանի հիշատակին

Մեղմ ու նուրբ հումորով, պարզ ու հստակ մի դերասան էր նա, որ ծիծաղ ու ջանք չէր ցուցաբերում երբեք բեմում: Նա չմատուցեց իրեն, այլ՝ տվեց բնական արվեստին արդար նվիրումով, բնական, իր տեսակին հավատարիմ, մաքրելի ու հարազատ: Թե կոմիկական, երգիծական, թե դրամատիկ, ողբերգական դերերում (Պարոնյանի, Սունդուկյանի, Համազասպի բեմերում, հեռուստատեսային ներկայացումներում, կինոյում) նրա խաղային մեկնաբանությունները եղել են անպատճառ շիտակ եւ հստակորեն չափի զգացումով:

Ցանկությունն ամենակարեւորն է մարդու կյանքում, այսպիսի հավատամք ուներ դերասանը եւ իր երազանքը՝ վերջին ցանկությունը՝ իբրեւ կարապի երգ, Դոն Քիխոտի կերպարի մարմնավորումն էր՝ այս աղարտված կյանքի հողմաղացների դեմ մշտապես արդար ու երազող հոգիների պայքար-բաղձանքը:

Երեկ բաբերական գործիչների միությունում կազմակերպված հուշ-երեկոն նվիրված էր հայ բատրոնի նշանավոր դեմքերից մեկի՝ Մայիս Ղարագյոզյանի հիշատակին:

Իր նախկին խաղընկերների՝ Լեւոն Թուխիկյանի, Շահում Ղազարյանի, Ժասմեն Սարյանի, բատերագիրներ Վարսիկ Գրիգորյանի, Հայկազ Երանոսյանի, Բախտիար Հովակիմյանի հիշատակի խոսքը հագեցած է թեթեւությամբ ու մեղմությամբ, պայծառությամբ, անցած օրերի ջերմությամբ, կարոտով, անկեղծ մտերմությամբ:

Աշխարհին թեթեւ նայող բարի ու լավ մարդու, ընկերոջ, տաղանդավոր դերասանի մասին խոսվեց դյուրին, հաճույքով ու սիրով:

Ցավի ու ափսոսանքի զգացումով հիշելով դերասանին՝ Երվանդ Ղազանչյանը նշեց, որ նա հայ բեմի այն եզակի նվիրյալներից էր, որ իր մեջ զուգորդում էր հրաշալի դերասանին եւ կարգին մարդուն: Նրա ապրած ժամանակները ինչ-որ առումներով բարենպաստ էին բատրոնի եւ ընդհանրապես արվեստի մարդու համար: Գոնե սրանք մի ժամանակահատված էր, երբ հետաքրքրություն, սեր ու հարգանք կար մշակույթի, բատրոնի նկատմամբ:

Ա. Չեխովի այն խոսքերը, թե դերասանը պիտի խաղա հնարավորին չափ պարզ, խորը եւ ազնվաբարո, շատ բնորոշ է Մայիս Ղարագյոզյանին: Բեմական անցած ճանապարհը դերասանի համար միշտ եղել է ստեղծագործական որոնումների շրջան, ուր նա մշտապես փորձել է ստեղծած կերպարներին հաղորդել բոլորին հարազատ պարզություն ու մաքրելիություն՝ երբեմն մանկական բարեսրտությամբ ու միամտությամբ: Դերասանը միշտ էլ նոր ծեւեր ու հնարքներ է փնտրել իր կերպարները ներկայացնելով թարմ ու ինքնատիպ ձեւերով, անընդհատաբար նորոգելի: Իր բնույթով կարծես թե անավարտ, անբավարար ու նաեւ դժգոհ, նա նաեւ անհավասարակշիռ ու ընդվզող էր: Սակայն նրան մշտապես ուղեկցող պայծառ լավատեսությունը, կենսասիրությունը անխուսափելիորեն փոխանցվել էր իր կերտած հերոսներին («Ծղոտե գլխարկ», «Շառլատաններ», «Կոծակը», «Ես եմ փեսան», «Ծեր տիկնոջ այցը», «Չախորդ Փանոսը» եւ այլն):

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱՅԵԱՆ

ՊՐԵՄԻԵՐԱ

Բախի «Չարչարանքներ ըստ Մատթեոսի»-ն՝ առաջին անգամ Հայաստանում

Արվեստի կյանքում կան փաստեր, որոնք անմիջապես դառնում են պատմական: Դրանց թվին կարելի է դասել Հայաստանում՝ Կամերային երաժշտության տանը Յ. Ս. Բախի «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» առաջին կատարումը: Ինչպես 1729 թ. Լայպցիգում կայացած պրեմիերայի ժամանակ, «Չարչարանքների» կատարումը (բնագրում՝ «Matthäus_Passion») համընկավ Ավագ շաբաթվան: Մեզ մոտ այն դարձավ հոգեւոր երաժշտության երկրորդ փառատոնի գլխավոր երաժշտական իրադարձությունը: Բացի դրանից, կարելի է հպարտանալ նրանով, որ Հայաստանը միջազգային ընկերակցության համար ընդհանուր տարեթիվը՝ Բախի մահվան 250-ամյակը նշեց նրա ամենահայտնի գլուխգործոցներից մեկի կատարմամբ:

Բախի ծավալուն հոգեւոր ստեղծագործությունը հիմնված է Մատթեոսի ավետարանի 26-27-րդ գլուխների վրա՝ բանաստեղծ Պիկանդերի մշակմամբ, որի բանաստեղծությունները եւս օգտագործված են այստեղ, գլխավորապես մենակատարում: Բախը խնդիր խմբագրել է իր գլուխգործոցը, բայց կոմպոզիտորի մահից հետո այն մոռացվեց եւ միայն 1829 թ. Բեռլինում Ֆ. Մենդելսոնի շնորհիվ վերակոչվեց համերգային կյանքի:

Երեւանյան պրեմիերայի համար պարտական ենք դիրիժոր Զավեն Վարդանյանին: Լավ հայտնի եւ հայկական մշակույթին նվիրված երաժիշտը երկու տասնամյակից ավելի կանգնած է բազմաթիվ ձեռնարկումների ակունքների մոտ: Դրանց թվում են Երեւանի կամերային նվագախումբն արդի երաժշտության իր ծրագրով, Մոցարտի «Առեւանգում հարեմից» օպերայի համերգային կատարումը, մրցույթներ եւ փառատոներ:

Վերջին տարիներին 18-րդ դարի գերմանական երաժշտության նկատմամբ հետաքրքրության աճը դիրիժորին, բնականաբար, հանգեցրեց բախյան մտահղացումներին: 1999 թ. նրա ղեկավարությամբ կատարվեց «Չարչարանքներ ըստ Հովհաննեսի» ստեղծագործությունը, որը յուրօրինակ փուլ դարձավ այս տարվա ձեռնարկման համար:

Բախը «Matthaus-Passion»-ը գրել է ընդլայնված կազմի համար. երկու երգչախումբ իրենց գործիքային համույթներով, երգեհոն եւ բազմաթիվ մենակատարներ: Պասիոնը մեկնաբանելով որպես օրատորիայի եւ միստերիայի միջակա ժանր, կոմպոզիտորը շեշտը դրել է դրա հոգեւոր ներգործության վրա. չէ որ պասիոնը նախատեսված էր եկեղեցական կատարման համար: Հոգեւոր բովանդակության վերարտադրումը մինչեւ օրս մնում է այդ երաժշտության էական դժվարություններից մեկը:

Կարծում ենք, երեւանյան պրեմիերան կարելի է կայացած համարել հենց տվյալ խնդրի լուծման շնորհիվ, որը երկրորդ պլան մղեց տեխնիկական թերացումները: Հետագա աշխատանքը եւ կատարման պարտադիր կրկնությունը կապահովեն թե մեկնաբանման անհրաժեշտ կոնցեպտուալությունը եւ թե դրա տարբեր բաղադրիչների ու մանրամասների կատարելագործումը: Եվ զգալիորեն ավելի հանդարտ տեմպերը կապահովեն Բախի երաժշտական ոճնապատկերի խորքում թաքնված ժանրի առանձնահատկությունը: Նրանք կազմում են երկու խումբ: Մեկում պատմական անձինք են (Ավետարանիչ, Հիսուս, Պետրոս, Պիղատոս, Հուդա եւ այլն), մյուսում՝ վերացականները (կանանց եւ տղամարդկանց արիաներ կատարողները):

Բնականաբար, ոչ բոլոր երգիչներն էին պատշաճ բարձրության վրա եւ դեռ ոչ բոլորն իրավունք ունեն երգելու «Matthäus_Passion»-ում: Կնշեմ, իմ կարծիքով, միայն արժանավորներին: Դա նախ եւ առաջ Սուրեն Զուրաբյանն է, որը կանտատային ոճի վարպետ ճանաչված կատարող է: Նրա ճկուն, փայլուն տեմբրով ձայնն ունկնդրին մերձեցնում էր վաղնջական դրամային: Հիսուսի դերերգը եւ բասի համար գրված մենակատարը կատարում էր Մկրտիչ Մկրտչյանը, որը նույնպես հոգեւոր երաժշտության նվիրյալներից մեկն է: Չնայած որոշակի ստատիկությանը, նրա երգեցողությունը կատարողական ոճի ճշմարիտ արտացոլումն է: Բարիտոն Ռոբերտ Բալեյանը (Պիղատոս) զգալիորեն աշխուժացրեց երկրորդ մասի վոկալ գունաբույլը:

Կին մենակատարներից իրեն վառ ձիրքով եւ կատարողական կայունությամբ դրսեւորեց Քրիստինե Սահակյանը (ալտ): Մենակատարը կատարեցին նաեւ ուսանողներ Գ. Մովսիսյանը (սոպրանո), Դ. Սահակյանը (մեցցոսոպրանո), Ա. Բրուտյանը (տենոր):

«Չարչարանքներ ըստ Մատթեոսի» պասիոնի երաժիշտների երիտասարդական կազմը երեւանյան կատարմանը նշանակալիություն տվեց. ուրեմն կա ապագայի հույս: Ուզում եմ դիրիժորին եւ բոլոր հովանավորներին շնորհակալություն հայտնել այդ հիշարժան երեկոյի համար, որը նվիրված էր Աստծո հետ երաժշտության լեզվով խոսող կոմպոզիտորին:

ԱՎԵՏԻՔ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Բաժանվեցին խաղադրությամբ

Հայաստան-Վրաստան՝ 0-0: Երեւան, «Հրազդան» մարզադաշտ: 26 ապրիլի:

Հայաստան. Աբրահամյան, Սուքիասյան, Խոջոյան, Հովսեփյան, Վարդանյան, Խաչատրյան, Պետրոսյան (Ասատրյան, 69), Ոսկանյան, Արամ Հակոբյան (Արմ. Քարամյան, 66), Շահգելդյան, Պետրոսյանց (Արս. Քարամյան, 54):

Վրաստան. Գրիգիկաբվիլի, Խիզանիբվիլի (Դիդավա, 69), Սիլաղաձե, Նեմսաձե, Տոդուա, Սիճինավա, Ալեքսիձե (Մենթեշաշվիլի, 32), Միկաձե (Ռեխվիաշվիլի, 32), Դեմետրաձե, Չալաձե (Իոնանիձե, 46), Կավելաշվիլի:

Մրցավար՝ Յակուբովսկի (Բելառուս):

Նորոգված կազմով Հայաստանի հավաքականը մարզիչ Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ առաջին մրցելույթն անցկացրեց մեր հանդիսատեսի առջեւ: Վրաստանի թիմի հետ հանդիպումը ցույց տվեց, որ մեր ընտրանին փնտրտուքների մեջ է ու իր ձեռագիրը ճշտելու, բարձր մակարդակի ֆուտբոլ ցուցադրելու համար դեռ շատ անելիքներ ունի: Եվ Հայաստանի, եւ Վրաստանի հավաքականների ու նրանց մարզիչների համար «Հրազդանում» կայացած հանդիպումը ուժերի լավ ստուգատես էր ապագայի առաջնության ընտրական խաղերից առաջ: Չէ՞ որ մինչեւ դրանց սկսվելը շատ ժամանակ չի մնացել՝ չորս ամսից մի փոքր ավելի:

... Շաբաթը համառ մրցակցություն ու բարձրարվեստ խաղ էին ակնկալում, հավանաբար, հիշելով անցյալի «Արարատ»-«Դինամո» թեժ հանդիպումները: Ցավոք, այս անգամ այնքան էլ հետաքրքիր, դիտարժան խաղ չստացվեց: Եվ դասճառն այն չէ, որ հարեւան երկրների հավաքականները ներկայացել էին ոչ ուժեղագույն կազմերով (սա առաջին հերթին վերաբերում է հյուրերին): Երկու թիմերի ֆուտբոլիստների մոտ էլ դակաստում էր մարզական պայքարի տենչը, ավյունը: Թերեւս, մատների վրա կարելի է հաշվել նրանց ցուցադրած հարձակողական կոմբինացիաները: Երկու կողմերի ֆուտբոլիստների գործողություններում էլ միայն ժամանակ առ ժամանակ էին երեւում ստեղծագործ խաղի նշույլներ, ինչը, իհարկե, հետագայի հույսեր է ներշնչում: Եվ Հայաստանի, եւ Վրաստանի հավաքականները շատ ավելի մեծ հաջողությամբ դաշտանվում էին, քան գրոհում, եւ դրա արդյունքը 0-0 հաշիվն էր:

Խաղից հետո թիմերի մարզիչներ Վարուժան Սուքիասյանն ու Դավիթ Ղիփիանին նշեցին, որ երկու կողմերի ֆուտբոլիստներն էլ չդրսեւորեցին իրենց բարձր կարողությունները: Նրանք ավելացրին, որ դեռ բավականին անելիքներ կան:

Մենք էլ հուսանք, որ Հայաստանի ընտրանին այս չորս ամիսների ընթացքում կբարելավի իր խաղը եւ արժանի մրցելույթներ կունենա աշխարհի առաջնության ընտրական փուլում:

Ռ. Ա.

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Ստացան թանկարժեք նվերներ

Բրեմենում տեղի ունեցող եվրոդայի առաջնության նախօրեին Հայաստանի սեղանի թենիսի ազգային հավաքականը ստացավ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ուղարկած լավագույն մարզագույքը՝ ռակետներ, ռակետների ծածկեր, հատուկ սոսինձ, գնդակներ... Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Ֆոլքեր Չայթցի ու դիվանագետ, սեղանի թենիսի մեծ սիրահար Սաբրինա Շմիդի ջանքերով Հայաստանի սեղանի թենիսի ընտրանին ու կրտսեր մարզիկ-մարզուհիներն անտարտելի, բայց հաճելի նվեր ստացան: Այս առիթով Շենգավիթի համայնքի սեղանի թենիսի մասնագիտացված դդրոցի գլխավոր մարզիչ Համլետ Հակոբյանը եւ Համահայկական խաղերի չեմպիոն, Չեյթունի սեղանի թենիսի դդրոցի մարզիչ Ռուբեն Գայբակյանը հատուկ հանդիպեցին տկն Շմիդի հետ, որը գերմանական ու ճապոնական հանրաճանաչ ընկերություններ «Տիբհարի», «Բատերֆլայի», «Անդրոյի» սեղանի թենիսային գույքեր բաժանեց տուրք 25 տնորհալի դդրոցի թենիսիստների:

Հայկական սդորտի բարեկամ հյուրը «դարգեւատրվեց» ծաղկեփնջով ու հիշատակի լուսանկարներով:

Սեղանի թենիսի նվերների բաշխման մի միջոցառում եւս տեղի ունեցավ «Դինամո» մարզադահլիճում, որտեղ մարզվում էին Հայաստանի ազգային ու դպրանեկան հավաքականների անդամները (վերջիններս մասնակցելու են Սլովակիայում կայանալիք եվրոդայի դպրանիների առաջնությանը): Նվերների հանձնումն ընդգրկեց նաեւ մայրաքաղաքի Զորավար Անդրանիկ թաղամասի սեղանի թենիսի դդրոցի առավել այրի ընկնող սաներին, ու եւս 25 խաղացողներ ստացան ծածկեր, գնդակներ, սոսինձ: Այստեղ եւս գերմանացի հյուրի «վարձատրությունը» ծաղկեփունջ էր, տնորհակալական խոսքեր ու հիշատակի լուսանկարներ: Տկն Շմիդը խոստացավ գլխավոր մարզիչ Վիգեն Ոսկանյանի սաներին եւ Գյումրիի ու Երեւանի «Սդարտակի» սեղանի թենիսիստներին եւս նվիրել գույք ու որակյալ ռակետներ ու ռակետների ծածկեր:

ՀԱՄՏ ՄՈՍԿՈՖՅԱՆ

Ստուգում են ուժերը

Շաբաթը հարուստ էր ֆուտբոլի ընկերական հանդիպումներով: Մեզ, իհարկե, առաջին հերթին հետաքրքրում են աշխարհի առաջնության եվրոդական 5-րդ խմբում ընդգրկված թիմերի մասնակցությամբ անցկացված խաղերի արդյունքները: Ընդ որում ընտրական խաղերում Հայաստանի միանգամից չորս մրցակիցներ ուժերի ստուգատես անցկացրին:

5-րդ խմբի ֆավորիտը՝ Նորվեգիայի ընտրանին, ընդունելով Բելգիայի հավաքականին, 0-2 հաշվով դարտություն կրեց, ինչը շատերի համար անսդասելի էր: Մեր խմբի մյուս ուժեղագույն թիմը՝ Ուկրաինան, Սոֆիայում հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց բուլղարացիներին: Միակ գոլը խփեց Անդրեյ Շեւչենկոն: Լեհաստանի հավաքականը, որը տեւական նահանջ է արդում, սեփական խաղադաշտում չկարողացավ հաղթել Ֆիններին՝ 0-0:

Շատ ավելի անհաջող էր մեր ադագա մրցակիցներից չորրորդի՝ Բելառուսի հավաքականի արդյունքը: Նա 0-2 հաշվով զիջեց Անդորրայի թիմին:

Ներկայացնենք նաեւ մյուս ընկերական խաղերի արդյունքները. Իտալիա-Պորտուգալիա՝ 2-0, Գերմանիա-Շվեյցարիա՝ 1-0, Դանիա-Շվեդիա՝ 0-1, Հոլանդիա-Շոտլանդիա՝ 0-0, Ֆրանսիա-Սլովենիա՝ 3-2, Ռումինիա-Կիպրոս՝ 2-0, Հյուսիսային Իռլանդիա-Հունգարիա՝ 1-0, Ռուսաստան-ԱՄՆ՝ 2-0, Իռլանդիա-Հունաստան՝ 1-0, Ավստրիա-Խորվաթիա՝ 1-2, Չեխիա-Իսրայել՝ 4-1, Լիխտենշտեյն-Ֆարերյան կղզիներ՝ 0-1, Լյուքսեմբուրգ-Էստոնիա՝ 1-1:

Սեուլում ընկերական հանդիպում անցկացրին նաեւ աշխարհի առաջնություն-2002-ի հյուրընկալողներ Հարավային Կորեայի եւ Ճապոնիայի հավաքականները: 1-0 հաշվով հաղթեցին կորեացիները:

ԵՎՐԱԳԱՎԱԹԵՐ

Մայիսի 17-ին, Կոպենհագենում

Գիսաեզրափակիչ խաղերից հետո որոշվեցին ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության վճռական հանդիպման մասնակիցները: «Լանս» (Ֆրանսիա)-«Արսենալ» (Անգլիա)՝ 1-2: Մրցակցի խաղադաշտում նվազագույն հաշվով կրած պարտությունը (0-1) ֆրանսիացիներին ընդհանուր հաջողության լավ հույսեր էր թողնում, սակայն անգլիական ակումբը կրկին հաղթեց: «Արսենալից» գոլերը խփեցին Թիերի Անրին (43) եւ Նվանկվո Կանուն (87), «Լանսից»՝ Պասկալ Նուման (73): «Լիդս» (Անգլիա)-«Գալաթասարայ» (Թուրքիա)՝ 2-2: Թուրքական ակումբը խաղարկության թերեւս ամենախոշոր անակնկալի հեղինակն է: «Գալաթասարայը» առաջին խաղում 2-0 հաշվով հաղթել էր «Լիդսին», իսկ պատասխան հանդիպման ժամանակ կարողացավ հասնել ոչ-ոքի արդյունքի: Դաշտի տերերից գոլերը խփեցին էյրիկ Բակկեն (16, 68), հյուրերից Գեորգե Հաջին (5, 11 մ) եւ Հական Շուքուրը (42): Այսպիսով, մայիսի 17-ին Կոպենհագենում կայանալիք եզրափակիչ խաղում ՈՒԵՖԱ-ի գավաթը կվիճարկեն «Արսենալը» եւ «Գալաթասարայը»:

Առջեւում կիսաեզրափակիչ խաղերն են

Չեմպիոնների լիգայի մրցումների հաղթողը կորոշվի մայիսի 24-ին: Վճռական խաղը տեղի կունենա Փարիզի «Սթադ դը Ֆրանս» մարզադաշտում: Իսկ Եվրոդայում ակումբային թիմերի ամենահեղինակավոր մրցանակի հավակնորդները հայտնի կդառնան կիսաեզրափակիչ խաղերից հետո: Իսպանական երկու թիմեր՝ «Բարսելոնն» ու «Վալենսիան» կհանդիպեն մայիսի 2-ին եւ 10-ին, իսկ «Ռեալը» (Իսպանիա) եւ «Բավարիան» (Գերմանիա) կմրցեն 3-ին եւ 9-ին:

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌ

ՏԻՐՈՋ ԼՈՒԾԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ



Ուղղահայաց

1. Գահին նստող, կրոնաքոս: 2. Հայ աստղաֆիզիկոս: 3. Սովետական ֆանդակագործ. «Մախիմ Գորկի: Մրկահավ» ֆանդակի հեղինակը: 4. Օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչություն ԱՄՆ-ում: 7. Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ավագանի ազգանունը: 9. Էժեն Պոտիեի հայտնի, ստեղծագործությունը, որը կոմպոզիտոր Դեգեյտերի գրած երաժշտությամբ դարձավ հեղափոխական բանվոր դասակարգի միջազգային հիմնը: 10. Պլազմայի խտության տատանումների էվանս: 11. Ե. Չարենցի պոեմը: 12. Աստվածաշնչյան իմաստուն, հեծագույն մարգարե, հուդայականության հիմնադիրը: 13. Գերբնական համարվող առարկաների կամ էակների կրոնական երկրպագություն: 16. Եռանդով վառել, բորբոքել, ոգեւորել: 21. Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու ազգանունը: 22. Սիրո Աստվածը հունական դիցաբանում: 23. Լանգերկվիստի հոգեւոր թեմայով գրած վիպակներից: 24. Ըստ հայկական ժողովրդական տոնացույցի՝ գարնան առաջին տոնը: 25. Խոշոր, սրածայր ասամ: 26. Ներկի առեւտրական: 28. Կիլիկիայի կաթողիկոսության աթոռանիստը: 29. Քրիստոսի ուսմունքը քարոզող: 31. Առաջին մեղսագործ կինը: 33. Արհամարհել, ...: 34. Ըստ աստվածաշնչյան առասպելի, բլուր Երուսաղեմում, ուր գտնվում է Եհովա Աստծո տաճարը: 36. Աստծո որդին, մեսիան, փրկիչը: 40. Սուրբ հոգուց հղիացած կինը: 42. Հրեաների գերագույն Աստվածը: 43. Եկեղեցական տոն:

Հորիզոնական

1. Անիի Գրիգոր Լուսավորչի տաճարի անունը: 5. Հրեաստանի այն թագավորը, որը հրամայել է սպանել երկրի բոլոր նորածին մանուկներին: 6. Հայերենի բարբառ: 8. Հայաստանի մայրաքաղաքներից: 10. Մեղուների խումբ: 14. Որեւէ ապրանքի դուրս տանելը: 15. Անհավասարիմ, մատնիչ, ...: 17. Էստոնացի օպերային երգիչ, բարիտոն: 18. Որսի խոտակեր կենդանի: 19. Մենակյաց կրոնավոր: 20. Աշխարհահռչակ ջութակահար: 24. Այնք

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Էլեկտրացանցերի սեփականաշնորհումից հրաժարվելը կարող է մեզ զրկել որոշ վարկերից

ԵՐԵՎԱՆ, 28 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐ: Համաշխարհային բանկը ժամադիր չէ գնահատականներ տալ 1998-2000 թթ. սեփականաշնորհման ծրագրի մասին օրենքից բախիչ էլեկտրացանցերը հանելուն, քանի որ Ազգային ժողովում այդ հարցի շուրջ ծավալվեց ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական բանավեճ: Այդ մասին հաղորդեց Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի արտաքին կապերի ծառայության ղեկավար Վիգեն Սարգսյանը: «Ակնհայտ է ձեռնարկված քայլի քաղաքական ասպեկտը», պարզաբանեց նա:

Համաշխարհային բանկում ենթադրում են, որ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը չի վավերացնի էլեկտրացանցերը սեփականաշնորհման ցուցակից հանելու մասին խորհրդարանի ընդունած օրենքը: Սարգսյանի կարծիքով, Ազգային ժողովն անցանկալի նախադեպ ստեղծեց, որը, այնուամենայնիվ, չի անդրադառնա Համաշխարհային բանկի առդեն գործող ծրագրերի իրացման եւ տրանսպորտի, սոցիալական ու դատաիրավական ոլորտների* զարգացմանը նպատակաուղղված երեք նոր վարկերի շուրջ բանակցությունների ընթացքի վրա:

Սակայն, ՀԲ երեւանյան գրասենյակի ներկայացուցչի կարծիքով, Հայաստանը դժվարությունների կհանդիպի SAC վարկերի տրամադրման հարցում: Բանն այն է, որ կառավարության եւ Համաշխարհային բանկի միջեւ համաձայնագրին համապատասխան, այդ միջոցների ստացումը պայմանավորված է էլեկտրացանցերի համար միջազգային մրցույթը ժամանակին ավարտելու պահանջով: Ավելի վաղ նախատեսվում էր մինչեւ մայիսի վերջը Հայաստանին փոխանցել 11 մլն դոլար՝ որպես SAC-3-ի չորրորդ վարկաբաժին եւ 45 մլն դոլար՝ որպես SAC-4 վարկ, որը նախատեսված է 2000-2001 թթ. բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար:

Կանադի բազայի վրա հայ-ռուսական ձեռնարկության կանոնադրական կապիտալի կտրուկ աճ

ԵՐԵՎԱՆ, 28 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐ: Մոտ ժամանակներս կոտրագրվի համաձայնագիր Քանադեռի ալյումինի գործարանի (ԿանԱՁ) բազայի վրա հայ-ռուսական ձեռնարկության ստեղծման շուրջ: Այդ մասին հաղորդեց «Քանադեռի ալյումինի գործարան» ՓԲԸ-ի վարչության նախագահ Ռոբերտ Ենգոյանը:

Նրա ասելով, բանակցությունների ընթացքում ավելի քան երկու անգամ ավելացել է նոր համատեղ ձեռնարկության կանոնադրական կապիտալը, բաժնեմասերի հարաբերակցությունը փոխվել է հօգուտ հայկական կողմի: Ենգոյանը նշեց, որ հետագայում այդ ցուցանիշները կփոխվեն ներդնողի ավանդների շնորհիվ:

Որպես հայ-ռուսական ձեռնարկության հիմնադիր հանդես են գալիս «Սիբիրյան ալյումին» խումբը եւ «ԿանԱՁ»-ը: Համաձայնագրի ձեւակերպման ծգծգումը պայմանավորված է Ռուսաստանի ալյումինի ծյուղի բարեփոխմամբ: Ինչպես հայտնի է, «Սիբիրյան ալյումին»-ը, Կրասնոյարսկի եւ Բրատսկի ալյումինի գործարանները միավորվել են «Ռուսական ալյումին» հոլդինգի կազմում, որին ներկայումս բաժին է ընկնում համաշխարհային շուկայի զգալի տոկոսը: Համատեղ ձեռնարկության ստեղծումից հետո դրա գործունեությանը կմասնակցի նաեւ «ԿանԱՁ»-ը:

Ռուսական աղբյուրների համաձայն, նախատեսվող համաձայնագիրը կստորագրեն ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կարեն Ճշմարիտյանը եւ «Սայանյան փայլաթիթեղ» առեւտրի տան գլխավոր տնօրեն Եգոր Անդրեեւը: «Սիբիրյան ալյումինի» ներդրումների ծավալը կկազմի շուրջ 30 մլն դոլար, ինչը թույլ կտա երեւանում արտադրել ամսական 2200 տոննա փայլաթիթեղ:

Երեւանում աշխատում են մոտ 500 չլիցենզավորված միկրոավտոբուսներ

ԵՐԵՎԱՆ, 28 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Երեւանի ավելի քան 100 միկրոավտոբուսային, 66 ավտոբուսային, 14 տրոլեյբուսային եւ 5 տրամվայի երթուղիներում աշխատում են 1200 լիցենզավորված միկրոավտոբուս, ավելի քան 25 ավտոբուս, մոտ 100 տրոլեյբուս եւ տրամվայ: Ինչպես հայտնեցին Երեւանի քաղաքապետարանում, մայրաքաղաքի երթուղիներում գործում են եւս շուրջ 500 չլիցենզավորված միկրոավտոբուսներ, որոնց ամսական չհարկվող եկամուտը կազմում է 200-300 հազար դրամ:

Վերջիններիս գործունեության կասեցման կամ հարկման դաշտ տեղափոխման նպատակով, ինչպես հայտնեցին քաղաքապետարանում, պետավտոտեսչության աշխատակիցների հետ միասին Երեւանում կազմակերպվում են շրջայցեր, որոնց ընթացքում հայտնաբերված օրինախախտները ենթարկվում են տարբեր վարչական տույժերի:

Ինչպես նաեւ լիցենզավորված 21 ապահովագրական ընկերություններ

ԵՐԵՎԱՆ, 27 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից լիցենզավորված էր 21 ապահովագրական ընկերություն, որոնց համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 1 մլրդ 303 մլն 525 հազար դրամ, իսկ սեփական կապիտալի հանրագումարը՝ 1 մլրդ 394 մլն 315 հազար դրամ: Ինչպես հայտնեցին նախարարությունում, ապահովագրական ընկերությունների շահույթը 1999 թ.-ին կազմել է 139 մլն 708 հազար դրամ:

Նախարարությունում հայտնեցին նաեւ, որ հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների ակտիվները կազմել են 2 մլրդ 442 մլն 533,2 հազար դրամ, իսկ կնքված պայմանագրերով մուտքերը՝ 1 մլրդ 84 մլն 201 հազար դրամ:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ

ՎԱՐՈՐԴ-ԱՌԱՔԻՉՆԵՐ

Սեփական մեքենայի առկայությունը գերադասելի է:

Զանգահարել 52-26-10:

ՀՍՀ 1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին՝ որպես կամավորական:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ

Հեռ.՝ 52 27 01, 52 27 72, 52 27 88

ՀԵՌՈՒՏԱՑՈՒՑԱԳՐԵՐ

29 ապրիլ

9.00 Հայլուր
9.20 Հիթ շքերթ
9.50 Սեզամ. բացվիր
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Մեր փոքրիկը մեծանում է
11.10 Գ/Ֆ «Նավաթեռ Ռոնը»
12.50 Լաբիրինթոս
13.15 Ազդարար
16.00 Սպորտային ծրագիր
17.00 Հայլուր
17.20 Ոսկեփորիկ
17.50 Նոր Հայաստան
18.10 Բարի ախորժակ
18.30 Տագնաող
19.00 Խորան լուսո
19.10 «Համով լոսո»
Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ՝
19.10 Ռուբիկոն+)
20.00 Կարծիք
20.25 Կամուրջ
21.00 Հայլուր
21.35 Պրեմիերա
21.45 Ձինուժ
22.20 Անմեղության կանխավարկած
22.45 Հայոց տաճարներ
23.00 Բոհեմ
23.40 Հայլուր
00.00 Գ/Ֆ «Վախ»

Պրոմեթեւս

10.00 «Բարի լույս, Հայաստան»
11.00 Մանկական սերիալ «Տարզան»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Քոնան»
19.05 Բնաբխարհ. «Բնությանը պահապան»
19.35 Համերգ
20.00 Լաբեր
20.35 Հայկական ժողովրդական երաժշտություն
21.00 «Արժանապատվության անատոմիա»
21.30 Երաժշտական Ամերիկա. Նոր Օռլեան
22.30 Գ/Ֆ «Բեն Թայլերի գործը»
00.05 Մեքեռ-TV

11.05 Ինչպես հասնել կատարելության. Ջեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Գ/Ֆ «Ով է այս աղջիկը»
15.00 Հրաղարակ
15.20 Ասպարեզ
16.00 Աներեւակայելին իրականության մեջ
16.30 Վավերագրական ֆիլմ
17.10 Համերգ
17.30 Վավերագրական ֆիլմ
18.00 Ընդդեմ փողկապի
18.30 Հմայիլ
19.05 Ձոջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիսաստղեր
20.30 Հետագիծ
22.10 Ոսկե սրինգ
22.40 Համերգ. Գարուն-2000
0.35 Ակնթարթ
0.40 Գ/Ֆ «Այս գիշեր»
(ավարտին՝ Սուրհանդակ)

9.00 Նորություններ
9.10 Հոգեւոր հովվի խոսքը. մետրոպոլիտ Կիրիլ
9.25 «Կուսոյի թիմի բոլոր ճանապարհորդությունները»
10.15 Ֆիլմ «Ասում եմ եւ սիրում եմ. վանական խոստովանությունը»
16.00 Նորություններ
16.10 Յոթերորդ զգայարան
16.55 Մեծ հոկեյին սպասելով
17.35 Դետեկտիվ-շոու
18.15 Որ հիշեն... Նիկոլայ Գրիգենկո
19.00 Նորություններ
19.10 «Եռալաբ»
19.20 Ֆիլմ «Զբոսանք դինոզավրերի հետ» (6-րդ՝ վերջին սերիա)
20.05 Գ/Ֆ «Կարմիր բռինչ» (դերերում՝ Վ. Շուկշին, Լ. Ֆեդոսեեւա-Շուկշինա, Ա. Վանին, 1973 թ.)
22.00 Ա. Դորենկոյի հեղինակային ծրագիրը
23.05 Հոկեյ. աշխարհի առաջնություն. Ռուսաստանի հավաքական-Ֆրանսիայի հավաքական
00.25 Քրիստոսի Ջաչիկը (հեռարձակում Բոգոյավլենսկու մայր տաճարից)

9.00 Կինոնկար-հեքիաթ «Ինքնակոչ արքայազնը»
10.30 ՊՏՊ-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.35 Հեռուստախաղ. «Հարյուրը մեկին»
12.25 Ինքդ քեզ ռեժիսոր
12.55 Սերիալ «Ընկերները»
13.20 Էհ, ճամփաներ...
13.35 «Ոսկե բանալի»
14.00, 21.00 Լուրեր
14.20 Դաշնություն
15.05 Ցերեկային սեանս. Տատյանա Դորոնինան «Խորթ մայրը» ֆիլմում
16.35 Երկիր մոլորակ
17.30 «Աստվածաշունչ-2000». «Աշխարհի ստեղծումը»
19.00 Իմ ընտանիքը
20.05 Երկու ձայալ
21.40 «Աստվածաշունչ-2000». Ջերեմի Սիսքոն, Ժաքլին Բիսեթը «Հիսուս» ֆիլմում (1-ին, 2-րդ սերիաներ)
00.40 Մեծ Ջաչկի տոնը. ժամերգության հեռարձակումը Աստծո հայտնության մայր տաճարից

30 ապրիլ

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.45 Շախմատ 64
12.00 Ձինուժ
12.35 Մուլտսերիալ «Թռվառներ» (3-րդ, 4-րդ սերիաներ)
13.30 Մարդը եւ բնությունը
14.00 «Լեգո» հեռուստամրցույթ
14.20 Բաբելոնից հետո
14.45 Մնջախաղի թատրոն
15.10 Կրկեսային ծրագիր
15.30 Փաստագրական կինոնկար «Ավիացիայի պատմությունը»
16.30 Արծաթե բանալի
17.00 Իմ տունը
17.20 Հայորդաց տներ
17.30 Քեռ-շոու
18.10 Բարի ախորժակ
18.30 «Կապիտալ»
18.55 «Խոշոր ճահիճ»
Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ՝
18.55 Ռուբիկոն+)
19.30 Հետաքննություն
20.00 Խորհրդարանական ժամ
20.30 «Ֆուտբոլ» մոլորակ
21.00 Կիրակնօրյա «Հայլուր»
21.40 Մանրամասներ
21.55 8 1/2. Գ/Ֆ «Արտի անհամեստ հմայքը»

Պրոմեթեւս

10.00 Մանկական սերիալ «Տարզան»
10.45 Կարճամետրաժ ֆիլմ «Տժվժիկ»
11.05 NON-STOP
11.30 Հնդկական կինոյի ժամ. Գ/Ֆ «Սերը խաղ չէ»
14.10 «Նիժինսկի»
15.00 Դրամատիկական վիճակախաղ
18.00 Մուլտֆիլմ
18.20 «Աշխարհի ստեղծումը» (ֆիլմ 2-րդ). «Երկիրը երիտասարդ մոլորակ է»
19.00 Աշխարհի հրաբուխները. Սուրբ Սոֆիայի տաճարը
19.10 Համերգ
19.35 Պուտեն. «Տարվա եղանակները»
20.00 «Միասին+» (Միր)
20.35 Ջազ. Մայլս Դեյիս
21.00 «Գործարար Հայաստան»
21.30 «Սերենչանք». Մայիս Մխիթարյան
22.00 Պավարոտին եւ իր ընկերները
22.30 «Ոգնի» լոսո
23.30 Գ/Ֆ «Գաջեթ տեսուչը»
00.45 Մեքեռ-TV

11.05 Ինչպես հասնել կատարելության. Ջեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Համերգ. Գարուն-2000 (կրկնություն)
15.00 Հրաղարակ
15.00 Ի դեպ
15.30 Գ/Ֆ «Ոսկիկանական ակադեմիա»
17.00 Անուշադրության կենտրոն
21.00 Գ/Ֆ «Առաջնածին մեղքը»
22.40 Ոգնի-SHOW
23.00 Յոթ քար լրատվական-վերլուծական ծրագիր
23.35 Գ/Ֆ «Անծայն գոռեմարտը»

9.00 Նորություններ
9.15 Գ/Ֆ «Նավաստի Չիժիկը»
10.45 Երալաբ
11.00 Նորություններ
11.10 Սմակ
11.30 Քանի դեռ բոլորը տանն են
12.00 «Արագացված օգնություն»
12.30 Առավոտյան փոստ
13.00 Գ/Ֆ «Հեքիաթ այն մասին, թե ինչպես ցար Պետրն ամուսնացրեց առաքին»
15.00 Ճանապարհորդների ակումբ
15.45 Մի գլուխգործոցի պատմություն
16.00 Նորություններ
16.10 Սերիալ «Լեռնցին»
17.00 Կանացի պատմություններ
17.30, 19.15 Տարվա երգը դարեդար
19.00 Նորություններ
21.00 Երեկո Միխայիլ Զադորնովի հետ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Սերն ու աղավնիները» (դերերում՝ Ն. Դորոշինա, Ա. Միխայլով, Լ. Գուրչենկո, 1984 թ.)
01.00 Գ/Ֆ «Գռայները» (դերերում՝ Ա. Պետրենկո, Լ. Ֆիլատով, Ա. Ռոմաշին, 1982 թ.)

9.00 «Հայրիկը, մայրիկը, ես՝ սպորտային ընտանիք եմք»
9.55 Ծառայում եմ հայրենիքին
10.20 Հեռուստախաղ «Մանկան շուրթերով»
10.55 Բարի լույս, երկիր
11.30 «Անբլաթ» եւ ընկ.
12.30 «Քաղաքիկ»
13.00 Ռուսական լոսո
13.40 Մուլտֆիլմեր
14.00 Լուրեր
14.20 Խորհրդարանական ժամ
15.10 Նոր «Հին բնակարան»
16.10 Երկխոսություններ կենդանիների մասին
17.10 Վավերագրական սերիալ «Հազարամյակի գաղտնիքները» Արմեն Ջիգարխանյանի հետ
18.00 Մամուլի ակումբ
19.00 «Հայելու» առաջ
19.10 Նիկոլայ Կարաչենցովը «Հաջողություն եմ ցանկանում, պարոնայք» ֆիլմում
21.00 Հայելի
22.00 Կինոյի ժամ. շաբաթվա ֆիլմը. Միխայիլ Եվդոկիմովը, Լեոնիդ Յակուբովիչը «Չուղարկե՛ք արդյոք սուրհանդակ»
23.55 Նիկոլայ Բասկովի համերգը
02.05 Վավերագրական ֆիլմ «Ռուսական գաղտնիք»

1 մայիս

17.00, 21.00, 23.40 Հայլուր
17.20 ՄՍ «Թռվառները»
17.45 Իմ տունը
18.00 «Սուրճ՝ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 Հայի բախտ
Արբանյակային հեռարձակմամբ՝
19.10 Կեսգիշերային ճեպընթաց
20.00 Ջեռագիր
20.35 Տուն-տունիկ
21.40 Հեռուստակատալոգ
21.50 Համայնապատկեր
22.15 Կուլիսների ետեւում
22.35 Ծիծաղի տուն
24.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.00 Բարի լույս, Հայաստան
10.00, 19.00 «Ամեն ինչ հանուն սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. «Նինձյա կրիաները», «Քոնան»
19.00 «Ամեն ինչ հանուն fo սիրո»
20.00 Լաբեր
20.35 «Հարցեր» Ռ. Մավիսակալյանի ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.35 «Ջեղնահարկ»
22.55 Գ/Ֆ «Արեւը հետամնդելիս»

9.00 Տոմար
ավարտին՝ Յոթ քար (կրկնություն)
19.05 Ձոջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Ավետա
20.30 Անթեղ
21.10 Դիվադաղար
22.00 Գ/Ֆ «Սպարտակ» (1-ին սերիա)
00.30 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Ռեգթայմ» (ավարտին՝ Սուրհանդակ)

9.00, 11.00, 16.00 Նորություններ
9.10 Բարի լույս
11.10 Երալաբ
11.25 Նվագիր, հարմոն սիրելի
11.55 «Արագ օգնություն»
12.25 «Ալֆ»
13.00 Գ/Ֆ «Պարմի մենաստանը» (1-ին սերիա)
14.35 7-րդ զգայարան
15.15 Հրավիրում է «Օսանկինոն»
16.10 Ֆուտբոլի ժամանակը
16.40 Տարվա երգը
19.55 «Զբոսանքներ դինոզավրերի հետ»
20.55 Ծիծաղի համայնապատկեր
22.00 Ժամանակ
22.45 Գ/Ֆ «Տանը միայնակ»
00.35 Սան Ռեմո-50.

9.00 Մուլտֆիլմ
9.20 Գ/Ֆ «Դեժա Վյու»
11.05 Բարի լույս, երկիր
11.45 Անբլաթ եւ ընկ.
13.00, 21.00 Լուրեր
14.20 Գ/Ֆ «Անընկճելիները»
15.40 Ն. Կորոլյովայի մենահամերգը
18.00 Գ/Ֆ «Վերջնագիր»
19.30, 21.40 Մ. Զադորնով
22.30 Հոկեյի ԱԱ. Ռուսաստան-ԱՄՆ
00.30 Գ/Ֆ «Մայրիկ, մի վշտացիր»
02.00 Գ/Ֆ «Ռոմանս»

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1249 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 28. 04. 2000 Գինը՝ 100 դրամ